



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



0668 57.3 R

1-37P

613.22

5-20

slig

6

Բժ.-ոս. գ. ՄԱՂԱՔԵԱՆ

ՄԱՂԱՔԵԱՆ  
ՅԱՅՈՒԹԻՒՆ



Բ հ ֆ լ ի զ

Տպարան Մ. Վարդանեանի

1903

21 JUN 2013

20 JUL 2010

610  
135-ՄԿ

613-2  
Մ-20

Ա Տ.

61  
328

# ՄԱՅՐ ԵՒ ԵՐԵՒԱՅ

1003  
1025

Հ. Ը Ն Ի  
Հ Բ -




Կ ա զ մ ե ց

ԲԺ. ԱԽ. ԳԵՐԱԴ ՄԱՂԱՔԵԱՆ

Թ Ի Փ Լ Ի Զ  
Տպարան Մովսէս Վարդանեանի  
1903

# ՅԱՄԵԴԻ և ՊԵՐԵ



Дозволено Цензурою. 19 Апрѣля 1903 г. Тифлисъ.

ՅԱՄԵԴԻ  
ՊԵՐԵ

ԺԱՌ-ՅԱՎԱՐ ԳՐԱԴՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՅԱՄԵԴԻ  
ՊԵՐԵ

2229  
018  
ԱՆ-881

Կայրա զմնն չեն ծցիք ոցըմբ զմացմ լսեցուն  
վազուարժու ուն շմացմասայ զմացին պիտի  
ուն բար յանցաւացը զմացի ծառարժուն պայ  
զմացի հմբ զազիք կրաքայ, զմացմասայ  
տանահաճմն ՅԱՄԵԴԱՐԱՆ թիւ միշտն  
այս զմն զմն յանու զուրցի գանձա՞ մատի  
դափացար զմն նայեած միտուն այց միշտուն

Այս օրից, եռու կինը մարդու է զնում, նրա  
վրայ գարճպում է մի ամբողջ շարք պարտա-  
կանութիւններ, որովհետեւ շուտով նա մայր է  
դառնալու նա վերցնում է շափից դուրս լուրջ  
եւ ծանր դեր. Այդ դերը կատարելու մէջ է կայ-  
անում կնոջ արժանադրութիւնը. այդ պատճա-  
ռով կինը պէտք է լաւ համեստայ յղութեան եւ  
ծննդաբերութեան գործողութիւնները. նա պէտք է  
լաւ գիտենայ երեխային կերակրելու, նրա վրայ  
հոգալու, դաստիարակելու եղանակը եւայլն. նա  
պէտք է հասկացողութիւն ունենայ առողջապա-  
հական գոնէ տարրական կանոնների մասին:  
Ահա միայն այդ ժամանակ նա արժանի կը լինի  
«մայր» պատուանուը կրելու եւ կը խուսափէ  
այն վնասակար հետեւանքներից, որոնք, դը-  
քաղղաքար, յամախ պատահում են այժմս մեր ըն-  
տանիքներում շնորհիւ իրանց տգիտութեան: Այս  
գիրքը կազմելիս մեր նպատակն է եղել, ըստ կա-  
րելոյն շափ, ծանօթացնել հայ մայրերին իրանց  
պարտականութիւնների հետ եւ այդպիսով հեշ-

տացնել նրանց ղերը։ Գրքի մէջ մենք ուզում  
էինք միքանի սպատկերներ եւս տեղաւորել,  
բայց ստիպուած եղանք հրաժարուել այդ մը-  
տադրութիւնից, որպէսզի գերքը գնի կողմէց  
մատշելի լինի հասարակութեան մեծամասնու-  
թեան համար։ Արդեօք հասել ենք մեր նպա-  
տակին, ղրա մասին թողնում ենք զաղափար  
կազմել ընթերցողներին։

### ԳԵՂՐԴ ՄԱՂԱՔՆԱՌ

1902 թ. Մեպս. 15

Մուկուտա:



Տ ա ռ ա ն ք ի մ է զ կան շ ա տ ե ր և յ թ ն ե ր, ո ր ո ն ք մ ե զ հ ա մ ա ր ա յ ն ք ա ն ս ո վ ո ր ա կ ա ն ե ն դ ա ր-  
ձե լ, ո ր մ ե ն ք ո ւ շ ա գ ր ու թ ի ւ ն ա ն գ ա մ չ ե ն ք դ ա ր-  
ձնում ն ր ա ն ց վ ր ա յ. «Ե ր ե խ ա ն ե ր ն ա ռ հ ա ս ա ր ա կ ն մ ա ն  
ե ն ի ր ա ն ց ծ ն ո ղ ն ե ր ի ն »։ Ո ՞վ շ գ ի տ է ա յ դ և ի ն չ  
զ ա ր մ ա ն ա լ ի բ ա ն կ ա յ ա յ ս տ ե ղ. Ս յ ն ի ն չ ա յ դ խ օ ս-  
ք ե ր ի մ է զ կ ե ն դ ր ո ն ա ց ա ծ ա յ ն ն շ ա ն ա ւ ո ր ե ր ե յ թ ի  
մ ի տ ք ը, ո ր ժ ա ռ ա ն գ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն է կ ո չ վ ո ւ մ ։

Ա մ ե ն ք ի ս յ ա յ ո ն ի է, թ է ե ր ե խ ա ն ի ր ը ո ր ք ա ն  
ն մ ա ն ե ն լ ի ն ո ւ մ ի ր ա ն ց ծ ն ո ղ ն ե ր ի ն «Մ օ ր ը տ ե ս,  
ա ղ ջ ի կ ն ա ռ », ա ս ո ւ մ է ժ ո ղ ո վ ր դ ա կ ա ն ա ռ ա ծ ը ։ Ա-  
մ ե ն մ ի ք ա յ լ ա փ ո խ ո ւ մ մ ե ն ք կ ա ր ո դ ե ն ք տ ե ս ն ե լ, ո ր  
ե ր ե խ ա ն ե ր ը ժ ա ռ ա ն գ ա կ ա ն ո ւ մ ե ն ծ ն ո ղ ն ե ր ի ց ն ր ա ն ց  
ք ա ր ձ ր ո ւ թ ի ւ ն ը, մ ա զ ե ր ի, կ ա շ ո ւ ի և ա շ ք ե ր ի գ ո յ ն ը,  
ձ ե ռ ն ե ր ի կ ա զ մ ո ւ թ ի ւ ն ը, ե ր ե ս ի գ ծ ա գ ր ո ւ թ ի ւ ն ը,  
մ ա ր մ ն ի մ ի ւ ս մ ա ս ե ր ի ձ ե ս ե ր ը ե ա յ ն ։

Ժ ա ռ ա ն գ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն ը կ ե ն ս ա ր ա ն ա կ ա ն մ ի օ-  
ր է ն ք է, ո ր ի չ ն ո ր հ ի բ ո լ ո ր կ ե ն դ ա ն ի ա ր ա ր ա ծ ն ե ր ը

ձկտում են ստեղծել իրանց նմաններին։ Նա հետեալ դասակարգերի է բաժանվում։

1. Ուզիդ ժառանդականութիւն, երբ երեխաները ծնողներից համահաւասար ստանում են նրանց ֆիզիքական և բարոյական յատկութիւնները։

2. Նախաղասելի ժառանդականութիւն. ա) ուզիդ, երբ հայրը իր յատկութիւնները տալիս է տղային, իսկ մայրը՝ աղջկան և թ) խաչանից ժառանդականութիւն, երբ հայրը իր յատկութիւնները տալիս է աղջկան, իսկ մայրը՝ աղային։

3. Գարձողական ժառանդականութիւն, երբ երեխաները ծնողների ոչ մի նմանութիւն չունենալով, ներկայացնում են նախնիների<sup>\*)</sup> կենդանի պատկերները։

4. Ժառանդականութիւն կեանքի ոլոշ շրջաններում, երբ ոլոշ առանձնայատկութիւնները երևում են սերնդի մէջ նոյն հասակում, ինչ որ ծնողներինք։

5. Փոփոխուած ժառանդականութիւն, երբ սերունդը ժառանդում է ծնողների ոչ թէ մի յայտնի յատկութիւնը, այլ որա զահաղան ձեափոխութիւնները։

Համար զահար զահի նույնախռով մի մէն զահար զահմարում մէն նորմառան զահմասմզ զահոր զահզար և զահզար զահմար, զահմայնացնազ զահնիուցրանք զահզար, զահմիուցրանք զահմառն

<sup>\*)</sup> նախնիներ պէտք է հասկանալ ոչ միայն պապեր, այլ և պապերի պապեր եայլն։

ոճմով զդանձու ուն մախարնառան — զմ ով նվազըրա ու մախաֆիքսի օժիքնենս սժամանական վահանակութիւննունդ ու զմելցվառաց մաք էն, և վարայ և նու զնառա սու։ Ամենալընդհանուր մի պիշեր Մասահնդական փու խատութիւններն են՝ ֆիզիքական ատիպը կամ արտարին կիերպարանքը, երեխի գծագրութիւնը, հառակը չները, կիաշու գոյնը կանյաց ժամանակագութառանութիւնը քարտագիծ ոյժը, անկանոնութիւնները, օրգանիզմի ընդհանուր քնորաց գծերը, այն է տեսպերածննութը, անձնական, բացասական ճաշական ճաշական ճաշականները, որ քժկական վեգութիւնի իդիօսինիքաղիա է կոչվում եայլն քրոն բասարական առանձնարարի ամենից առաջ երեխաները ժառանդում ին ծնողների լաւ կամ վատ մարմնակազմութիւնը, Պա ապացուցիւմ է բազմութիւն օրինակներուի։ Մեծ քաղաքներում ազգարնակութիւնը հետք հետու նուազում է և այլատեսվում ու զբա զիսաւոր պատճառը ի հարկէ ծնողների թոյի մարմնակազմութիւնն է ամենքամց գարիքի անհամապատասխանութիւնը եայլն։ Այ ժամանակի աղակերեմնացիք իրանց Արքիդամոս անունով թագաւորին տուպանքի էին ենթարկել, որովհետև նա ամուսնացել էր թոյի և ցածրահասակ կնոջ վրայ նրաներ ասում էին, որ այդպիսի կինը կարող է ծնել միայն որիէ թոյի թագամանդ — ուժեղ և պարթև սպարացիններին։

Դէմքի նմանութիւնը, երեխի կանոնաւոր և անկանոն գծագրութիւնները, նրա գեղեցկութիւնն

ու տգեղութիւնը — ժառանգական են։ «Խնձորը խնձորենուց հեռու չի ընկնում», ասում է ժողովրական առածը։ Ո՞ւմ յայտնի չէ, թէ կան ընտանիքներ, որոնց մէջ քթերի մեծութիւնն ու շրմունքների հաստութիւնը ցեղական են լինում. դեռևս հին Հռոմում յայտնի էր այդ բանը, որին ապացոյց կարող է լինել Նազոնների (միծ քթանի), Լարէօնների (պոկոշ) և ուրիշների մականունը։ Նեղ կամ լայն ճակատը, մանր աշբերը, մեծ բերանը և այլն նոյնպէս տարածուած են շատ ընտանիքներում։

Հասակը։ Հասակի ժառանգականութիւնը ամենասովորականներից մէկն է։ Ցածրահասակ և բարձրահասակ ծնողները ծնում են իրանց նման ցածր կամ բարձր երեխաներ։ Ֆրիգրիկոս մեծի հայրը, հիմնուելով այդ սկզբունքի վրայ՝ կազմակերպել էր հսկաների մի գունդ։ Սյդ թագաւորը թոյլ էր տալիս իր այդ գնդի զինուորներին ամուսնական միայն այն կանանց հետ, որոնք նոյնպէս բարձրահասակ էին։

Կաշու գոյնը։ Կաշու գոյնը նոյնպէս անցնում է սերնդից սերունդ։ Օրին. մենք գիտենք, որ Կովկասեան ցեղի երեխաները ժառանգում են ծնողներից նրանց մարմնի սպիտակ գոյնը, սևամորթ ծրնողների երեխաները ժառանգում են նրանց կաշու սև գոյնը և այլն։ Բացի դրանից շիկագոյն ծնողներից լինում են շիկագոյն, սևագոյն ծնողներից — սևագոյն երեխաներ։

Բեղմնաւորութիւն։ Կան ընտանիքներ, որոնց

մէջ բեղմնաւորութիւնը ցեղական է լինում։ Օդիանդէրը պատմում է, որ մէկ գեղջկուհի 15 տարուան ընթացքում 10 անգամ երեխաներ է բերել երկուորեակներ, իսկ ընդամենը 28 երեխայ։ Վերջին անգամ նա երեք աղջիկ է բերել. երբ նըանը մեծացել ու մարզու ևն գնացել, նրանցից առաջինը 36 երեխայ է ունեցել, երկրորդը 31, իսկ երրորդը 27։ Պարզ է, որ այդպիսի արտակարգ բեղմնաւորութիւնը ժառանգական է։

Երկարակեցութիւն։ Բոլորը վկայում են, թէ երկարակեցութիւնը կախուած է ոչ այնքան ցեղից, կիմայից, պարապմունքներից, կենցաղավարութիւնից ու մոռնդից, որքան ժառանգական փոխատւութիւնից։

Երկար ապրող մարդկանց մենք պատահում ենք ինչպէս կոմիասեան, այնպէս և մոնղոլական ցեղի մէջ, հիւսիսում և հարաւում, լաւ և վատ ապրողների, մինչև անգամ բանտարկեալների և տաժանակիր աքսորականների մէջ, Երեսում է, որ երկարակեցութիւնը կախուած է աւելի օրգանիզմի ներքին ոյժից և նրա կինսունակութիւնից։ Յայտնի բժիշկ Lucas'ը ժառանգական երկարակեցութեան հետեւալ օրինակն է բերում։ Յոնդարիայում Ռովեր ազգանունով մի մարդ ապրել է 172 տ., նրա կինը — 164 տ.։ Հօր մահուան օրը մեծ տղան 115 տ. էր, իսկ փոքրը 100 տարեկան։

Ըսդհակառակը կան ընտանիքներ, որոնց մազերը սպիտակում են դեռևս երիտասարդ ժամա-

Նակը ուրիշ բնտանիքներում շատ առվերական է  
վաղաճաս մահը՝ ապէց ի՞ն դո չ նուեար զոյք  
առնլու յայլ չ դժևախնդ նարմ Օ՛ նոզանիմ  
ԱՅԼԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ԶԱՐՔԱՑՄԱՆ  
ԱՆԿԱՆՈՒՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒ-  
ԹԻՒՆ

Դժբաղդարար այլանդակութիւնները նայալին  
կարող են սերնդից սերունդ անցնել, թէ աւելի  
պակաս չափով. Օր, համար, ժամանակով ապրում  
էր եղուարդ Լամբերտ անունով մի մարդ, սրի ամ-  
բողջ մարմնը, բացի երեսից, ձեռներից և ոտնե-  
րից, ծածկուած է եղել եղունգանման վիրաբոյսերով  
(наростами). Սյդ մարդը 6 երեխայ է ունեցել,  
որնք ծնուելուց 6 շաբաթ յիտոյ ծածկուել են նոյն  
վիրաբոյսերով և այդպէս այդ այլանդակութիւնը  
փոխանցել է 5 սերունդ շաբունակ արական սեռին.  
Սյդ տեսակ ժառանգականութեան օրինակ կարող  
են լինել և 3, 4, 6 կամ 7 մատ ունենալը, շըրթ-  
նահերցը (заячья губа), տշքերի, ատամների այ-  
լանդակութիւնը ևայն.

ԲԱՐՁՅԱԿԱՆ ԵՒ ՄՑԱՀՈՐԸ ՀՅՈՒՂԻՆԱԿՈՒ-  
ԹԻՒՆՆԵՐԻ ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ — զոյ-

ժառանգականութեան օրինակը շին սահմա-  
նափակում միմիայն վիզիքական յատկանիւնը,

այլ տարածվում են նաև անհատի բնազդի և բարոյ-  
ական յատկութիւնների վրայ: Վաղուց արդէն  
յայտնի է, թէ խելացի ծնողներից առհասարակ խե-  
լացի երեխաններ են ծնվում, ընդհակառակը՝ յիմար  
ծնողներից — յիմար երեխաններ: Անզիացի զիտնա-  
կան ֆալտոնը բազմաթիւ դէպքեր է նկարագրում,  
որոնք ցոյց են տալիս, թէ միայն միայն սովորական  
մտաւոր ընդունակութիւնները, այլև հանճարը շատ  
անգամ փոխատրվում է ժառանգարար: Պէտինի  
թագաւորական ցեղը Եվեղիայում տուել է մի շարք  
երեխի մարդիկ, որոնց վերջին ներկայացուցիչը  
հանճարեղ կարլոս IX էր: Բախէրի ընտանիքը, ինչ-  
պէս յայտնի է, 8 սերունդ նրածիշտներէ տուել,  
որոնցից 5-ը յայտնի երաժիշտներ են եղել: Միև  
կողմից սերնդից սերունդ փոխատրվում ան գողու-  
թիւնը, սպանութիւնն առ զանազան ախտերը:  
Պատմութիւնից յայտնի է, որ հասմայեցոց զաղա-  
նաբարոյ թագաւոր Վլաւդիտոսի տոնմիցն էին Աղի-  
գուլլան, Ազրիալպիման և Նէրոնը, որով զաղա-  
նութիւնով բոլորին էլ պերազանցեց: Ատրիդների,  
Հերակլիդների, Եզրիդների պատմութիւնը լի է ան-  
թիւ սպանութիւններով ու սճրագործութիւններով:  
Քատարոնները յաճախ ոճրագործի հօրը, պապին,  
կամ պապի պապին գանում են նոյն տեսակը յան-  
ցաւոր, ինչպէս և իրան ոճրագործին: Սյդպիտով  
ոճրագործութիւնների ժառանգականութիւնը նոյն-  
չափ իրական է, որչափ և ամեն մի ժառանգակա-  
նութիւն:

այսակ և պրատի վայումն մաս մն նախնական լրա  
ՀԻՒԱՆՀՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԻ-  
ԿԱՆ ՎԻԽՈՎԻՉԻՐՄ ԹԻՀՆ մն զժամանակ վայ  
ԴԱՎԱԿԱՆՈՒՄ ԷԲԻ ՅԱՊԱԼՎԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ,  
ՍԵԺՄՍ աՆՏԵՔԵԼԻ ՓԻԱՍՄ է, որ կամ հիւանդութիւն-  
ՆԵՐ, որոնք ծնուներից անցնում են երեխաներին.  
ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ այդ փոխատռութիւնը երկու տեսակ  
է լինում. կամ սերմի և ձուիկի, կամ մօր օրգա-  
ՆԻՎՄԻ (արեան) միջացով. Սյդպիսով առաջին դէպ-  
քում հիւանդութեան փոխատռութիւնը սաղմնառու-  
թեան ժամանակ է կատարվում, երկրորդ դէպքում  
արգանդում սաղմի աճելու ժամանակ. Եթէ սաղմ-  
նառութիւնը հարբած ժամանակ է կատարվում, այդ  
դէպքում ես յաճախ ծնվում են հիւանդու, նեար-  
գային, դէպի ընկնաւորութիւնը (ՅԱԿԼԵՊԵԱՅ), հիւ-  
տերիան արամագրուած երեխաներ, եթէ ծնողները  
առողջ էլ լինեն, ժառանգական հիւանդութիւնների  
փոխատռութիւնը շատ սահմանափակուած է. եթէ  
այդպէս չլինէր, վաղուց արգէն ամբողջ մարդկային  
ցեղը հիւանդ կը լինէր. Ժառանգական հիւանդութիւն-  
ների մէջ առաջին տեղը բռնում են հոգեկան հի-  
ւանդութիւնները. Դիտողութիւնները ցոյց են տա-  
լիս, որ հոգեկան հիւանդութիւնը զանազան կերպ  
է փոխատրվում. Նա կարող է հիւանդ ծնողներից  
ուղղակի երեխաներին անցնել. Սյդ դէպքում հի-

ւանդութիւնն առհասարակ նոյն բնաւորութիւնն է  
ունենում, ինչ որ ծնողներինը՝ Յր, մի մարդ, ապ-  
շելով ֆրանսիական յեղափոխութիւն անցըերից,  
խելագարուեց, փակուեց իր սենեակի մէջ և միքա-  
նի տարիաշարունակ դուրս չեկաւ. Նոյն հասա-  
կում նրա աղջիկն էլ խելագարուեց, նոյնպէս փակուեց  
սենեակում և ոչ մի կերպ չէր ուզում գումս գալ.  
Հոգեկան հիւանդութիւնները փոխատրվում են աւելի  
մօրից, քան հօրից. Սյդ պատճառով սերնդի համար  
աւելի վտանգաւոր է մօր հիւանդութիւնը, Բացի  
ուղղակի փոխատռութիւնից, հոգեկան հիւանդու-  
թիւններից ժառանգականութիւնը կարսկ է արտա-  
յայտուել և հիստերիայի, մելամաղձութեան, նեարդա-  
թուլութեան (ԽԵՎՐԱԾԵՎԻԱ) և այլ հիւանդութիւն-  
ների ձեռով.

Միւս հիւանդութիւններից, որոնք սերնդից  
սերունդ են անցնում, գլխաւորներն են՝ զեղծախտը  
(ՅՈԼՈՒԿԱ), սիֆիլիսը, արենաթորութիւնը, բթա-  
ցաւը (ՊՈԴԱՐԱ) և այլն:

Առանձին ուշադրութեան արժանի է վարակիչ  
(ԽԻՖԵԿՊԻՕՆԵԱՅ) հիւանդութիւնների ժառանգա-  
կանութիւնը. Սյստեղ ժառանգական կարող է լինել  
կամ ինքը հիւանդութիւնը, կամ դէպի հիւանդու-  
թիւնն ստացած տրամադրութիւնը. Յէ ինչնւմն է  
կայանում այդ «տրամադրութիւնը», մինչև այժմս  
յայտնի չէ: Բայց մենք չենք սխալուիլ, եթէ այդ  
«տրամադրութիւնը» համեմատենք մի թոյլ հիւան-  
դութեան հետ, որ կարող է միևնույն կերպ մնալ.

մինչեւ անհատի մահը, մինչեւ պնդամբ բոլորովին անհատանալ, կամ զանազան մինասարեր պատճառների ազդեցութեան տակ իրկական հիւանդանթիւն դառնալ, Օյն հիւանդութիւններից, որոնք փոխառութեան ծնողներից երեխաներին բարդէն սրատրաստիւկերի սովոր, առաջին տեղը բռնուամ է սիփիլիսը, Սիփիլիսը կարող է փոխառուել թէ մօրից և թէ հօրից, անթէ հայրը սիփիլիսոտէ, մայրը, հիւանդութեան փոխառութեան միջնորդ լինելով, կարող է ինը առաջու մնալ, Օիփիլիսը վարակիչ է բոլոր շրջաններում, յաճախ նա բռն է դնուամ մարդու օրդանիղմի մէջ, առանց սրսէ տրտաքին նշանների, այն ինչ նա զարգանում է թաղուն կերպով, որովէտ լինը առաջիւ տոյ երեայ աւելի մեծ և սովորված ժամանակին կերպ ներկայ նն հիւանդութեան ուարդ նշանները, ի հարձ կէ նա աւելի և պարակիչ է կամ արայացում է աւելի սուր երեսում, կամ մետած երեխաների է ծնում, (Եթէ երեխան մեւած էլ չի ծնվում, նա կամ ծնուելուց մինչեր կու չարաթ անցած մեռնում է, կամ լաւ պէտքում աւելացնում է միայն թշուառների թիւը, ճորհբաղբարար ժառանգական փոխառութիւնը սրարած վուամ է միմիայն մօտակայ սերնդի վրայ, այնպէս որ սիփիլիսունների թոռները բոլորովին ազատ են մեռնուածից, Միւս կողմից՝ որքան աւելի ժամանակ է անցնուամ ծնողների սիփիլիսի նշանները անհատանալուց, այնքան քիչ է լինում և հիւանդութեան փոխառութեան հաւանականութիւնը, Շատ դէպ-

քերում, ինչպէս վերև առաջինը ամայրը ազատ է մօռում վարակուելուց, բայց երբեմն նա ունի էլ է վարակվում հիւանդ երեխայից, երեխան վարակում է մօր ծծերը, որտեղից թոյնը տարածվում է ամբողջ մարմնի ունկնջաւ, Դիմնից երեսունը, որ սերունդը յամինայն գէպս հնֆարկուած է վարականդիւ Այն երեխանները, որոնք ծնուել են սիփիլիսոտ ծնողներից միշտ կրտսմ ին փրանց մէջ այդ սարսափիլի հիւանդութեան նշանները, Ահա սրտեղից է մակում այն թշուառարարածների բազմութիւնը, որ տանցվում է զղուելի հիւանդութիւններից (գեղձախտ, բախտ, բարակացած և այն), Երբեմն էլ սիփիլինը այլանդակում է մարդուն մաշելով միւնոյն ժամանակ նրան օրգանիզմը, Այդ սպատճառով հարկաւոր է, որքան կարելի է շուպ և սեռանդուն կերպով կռուել այդ շարքին դէմ, որպէսպի, ըստ կարելոյն շուտ, դժբաղութիւնների առաջն առնուի, Մինչեւ այժմ մեր խօսում էինք այն տեսակ հիւանդութիւնների մասին, որ անդցնում է ծնողներից արդէն մաստրաստի կերպով երեխաններն, այն ինչ ժառանգական հիւանդութիւնների առնենասովորական ձեր դէպի հիւանդութիւնն գտացած արամագրութիւնն է, Թէ լինչ է այդ արամագրութիւնը, մենք արդէն բացա տրեցինք վերեւում, Ակերզին տեսակի հիւանդութիւնները շատ յաճախ են պատահում և յայտնի են իրանց կողծանիչ հիւանդներով, այդ պատճառով նրանք արժանի են մեր առանձին ուշադրութեան, Որ, համար վերցնենք բարակացաւը, Դիտողութիւն-

ներըցոյց են տալիս որ բարակացաւը չի անց-  
նում ծնողներից երեխաներին, որովհետև թո-  
քախտոտի թրեխաներն առճասարակ առաջին տա-  
րիները բոլորս պին առողջ են լինում. Բայց անց-  
նում է որոշ ժամանակ և դէպի հիւանդութիւնն  
ատացած տրամագրութիւնը ցոյց է տալիս իր զօ-  
րութիւնը:

Թոքախտոտ ծնողների երեխաների աւշային  
դեղձերը (լամֆատ. շելզե) յաճախ առաջնում են.  
այդպիսի երեխաների գոյնը յաճախ գունատ է,  
կուրծքը տափակ, կողերը բարակ, մկանները վաս-  
գարգացած են. Թոքախտոտ ծնողների երեխա-  
ները թեթև մրսելուց, վատ կամ անբաւարար սը-  
նունդից, երբեմն էլ բոլորս պին անյայտ պատճառ-  
ներից, հիւանդանում են բարակացաւով. Ընդհակա-  
ռակը՝ այն դէպում, երբ երեխաները լաւ պայման-  
ների մէջ են գտնվում, շատ անգամ ազատ են մը-  
նում այդ սոսկալի հիւանդութիւնից, չնայած նը-  
րանց՝ դէպի հիւանդութիւնն ունեցած տրամագրու-  
թեանը. Ահա թէ ինչու միևնոյն թոքախտոտ ըն-  
տանիքի անդամներից շատերն ազատ են մնում  
այդ հիւանդութիւնից. Այդպիսով պատճականու-  
թիւնը միայն կարող է ազատ պահել թոքախտոտի  
սերունդը նրա նախնիքի դառն վիճակից. Բայց  
մենք որոշ շափով կարող ենք նոյնիսկ կուրել այդ  
«տրամագրութեան» դէմ զանազան առողջապահա-  
կան միջոցներով, որոնք են թոքերի մարմար-

գութիւնը, լաւ կլիմանը և բնակարանը, լաւ սնուն-  
դը և այլն:

ԺԱՌԱՆԴԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԷՄ  
ԿՌՈՒՀԵԼՈՒ ՄԻՋՈՑ Ե ԱՐ

Ժառանգական հիւանդութիւնների դէմ կոռւե-  
լու համար երկու միջոց կայ. Նախազգուշացուցիչ մի-  
ջոց, որ կարելի է գործադրել նշանազրեալների դէմ  
նրանց ամուսնութիւնից առաջ, և բութից միջոց, որ  
կարելի է գործադրել արդէն ծնուած երեխաների  
դէմ:

Նախազգուշացուցիչ միջոց, ժառանգականու-  
թեան օրէնքների համաձայն՝ առողջ սերունդ ունե-  
նալու համար հարկաւոր են առողջ ծնողներ. Այդ  
պատճառով, որպէսզի սերունդը ազատ պահուի զա-  
նազան ժառանգական հիւանդութիւններից, հարկա-  
ւոր է արգելել այն մարդկանց ամուսնութիւնը, ո-  
րոնք որինէ լուրջ հիւանդութիւնն ունեն.

Մեր մէջ առհասարակ ծնողները՝ երբ ուզում  
են ամուսնացնել իրանց զաւակներին, թագյենում  
են նրանց առողջութիւնը. Հիւանդու, դեղձախտա-  
ւոր, հիստերային օրիորդին ամուսնացնում են դեռ  
ուհաս տղամարդու հետ, որ կարծում է թէ իր  
հարոնացուն առողջ է. Այդպիսի անձանց ամուսնա-  
նալը կատարեալ ոճրագործութիւն է. Օրէնքը պլատը  
է հալածի և մինչև անզամ լուծի այդպիսի ամուս-

նուգմիւնը, Հնգիկների և Զինացիների օրէնսդրութեան մէջ մենք կարդում ենք. «Եթէ հայրը մարդու է տալիս իր աղջկան՝ որ մարմնի որևէ օրդանական պակասութիւն կամ վարակիչ հիւանդութիւն ունի, առանց փեսային իմաց տալու, վերջինը ամուսնանալով նրա վրայ, իրաւունք ունի լուծել այդ ամուսնութիւնը...». Ամուսնանալ կարող են միայն այն անձինք, որոնք բոլորովին ազատ են ժառանգական հիւանդութիւններից. իսկ եթէ ամուսիններից մէկը թոյլ կաղմուածքի տէր է, անհրաժեշտ է որ գոնէ միւսը լինի շատ առողջ և աւժեց.

Հիւանդ մարդիկ պէտք է հրաժարուեն հայր կամ մայր գառնալու ուրախսութիւնից, այդպէս է թերագրում քանականութիւնը: Այդ դէպքում հիւանդ պէտք է զեկավարուի այն ազնիւ մաքով, որ աւելի մարդասիրութիւն է մեն-մենակ տանել անբաղդութեան լուծը, քան ենթարկել նոյն գրութեան իր ամբողջ ընտանիքն ու ապագայ սերունդը. Եթէ այդպիսի մի մարդ ամուսնանայ էլ, յետոյ նրան պիտի տանջի իր խիղճը, որ ինքը շարիք է պատճառում ոչ միայն իր զաւակներին, այլ յաճախ և հեռաւոր սերունդներին... Մանտեպացցան իր «Հիւանդ սէր» գրքի մէջ այսպէս է գրում. «Եյն մարդը, որ հիւանդ լինելով ուզում է սերունդ ունենալ, վատ հայր (կամ մայր) է, որովհետեւ դրանով նա թունառում է իր զաւակների կեանքը. վատ քաղաքացի է, որովհետեւ տալիս է ժողովրդին վատ քաղաքացիներ,

վերջապէս, վատ մարդ է, որովհետեւ նա խլում է առողջութիւնն ու ոյժը, որոնք կազմում են մարդու ամենալաւ ժառանգութիւնը: Ոչ հարստութիւնը, ոչ զիտութիւնը, ոչ դաստիարակութիւնը և ոչ կրօնը, չեն կարող փոխարինել վաղաժամ կարցրած առողջութիւնը, որովհետեւ դրանք այնժամանակ միայն աշքի են ընկնում, երբ մարդ մառող է:

Յոհաննէ միջոց, Սյուտել ամենից առաջ մենք պէտք է ժառանգական հիւանդութեան զարգանալու առաջն առնենք, Դրա համար հարկաւոր է երեխային աղատել այն պայմաններից, որոնք վնասել են նրա հօրի ու մօրը, ինչպէս որ հակառակողապահական բնակարանը, վատ մննդառութիւնը, վատ օդը ևայլն: Երբ երեխան ծնվում է հիւանդութեան սաղմով, հարկաւոր է նախ և առաջ իմանալ՝ նւմից է ստացել նա այդ հիւանդութիւնը, հօրից թէ մօրից: Եթէ մօրից է, նորածնին իսկսյն հարկաւոր է ուրիշ սնունդ տալ, որովհետեւ մօր կաթը կարող է միայն վնասել նրան: Ժառանգական հիւանդութիւնների առաջն առնելու և նրանց յաղթելու ամենագլխաւոր միջոցն է—բոլորովին փոխել կեանքի այն պայմանները, որոնց մէջ զտնվում էր առաջ անհատը: Այդպիսով, օրինակ՝ այն անձը, որին գեղձախտ է սպանում, պէտք է հեռանայ յուրտ ու խոնաւ տեղից և բնակուի չոր և տաք կլիմայում, լաւ սնունդ ունենայ եայլն:

Ներկայ ամ մասնաւոյ Հայութ առաջ ահապահ  
առարկան մմ Ներկայ առաջ ահապահ ահապահ  
ահապահ ահապահ ահապահ ահապահ ահապահ  
**ԳԼՈՒԽ II**  
ՍԵՐԱԿԱՆ ՀԱՍՈՒՇՈՒԹԻՒՆ  
(Հափաճառութիւն)

Զահէլ աղջկայ հասունութեան առաջին նշանը՝  
դաշտանի—լուսնի կամ արեան պարբերական հոս-  
ման երևալն է։ Առհասարակ մինչ այդ՝ հասունու-  
թեան միւս երեսյթները բացակայ են լինում, կամ  
թէ չէ շատ թոյլ են։ Սակայն պէտք է նկատել, որ  
դաշտանի երևալը գեռ ևս ցոյց չէ տալիս ամբողջ  
օրգանիզմի զարգացումը։ Ոչ միայն մարմնի բոլոր  
մասերը, այլև սեռական գործարանները, մանաւանդ  
արգանդը մինչև 20 տարեկան հասակը միայն կա-  
րելի է հասունութեան հասակ անուանել, երբ կի-  
նը՝ առանց վտանգի թէ իր և թէ սաղմի առողջու-  
թեան համար, կարող է մայր դառնալ։

Վաղ ամուսնութիւններ։ Եթէ ծնողները պը-  
տակում են իրանց աղջիկներին նրանց կատարեալ  
ֆիզիքական զարգացումից առաջ, նրանք մեծ շարկ  
են գործում։ որովհետեւ, ինչպէս ասացինք, այդ  
դէպրում թէ մայրը և թէ սաղմը ենթարկվում են  
վտանգի։ Կանանց ոյժերի զարգացումը կանգ է առ-  
ում, նրանց հասակը և մարմնի ձևերը այլանդակ-  
վում են, նրանց արգանդը, չհասնելով հարկաւոր  
զարգացմանը, իր մէջ չէ կարող ոչ սլարունակել

սաղմ, ոչ էլ տալ նրան այն ամենը, ինչ որ հար-  
կաւոր է նրա կատարեալ զարգացման համար։ Կոն-  
քի փոքրիկ տրամագիծը և անցքի նեղութիւնը, ո-  
րից պէտք է աշխարհ գայ երեխան, բաւական յա-  
ճախ կործանիչ պատճառներ են դառնում մօր և ե-  
րեխայի համար։ Առհասարակ այդպիսի դէպքերում  
ծննդաբերութիւնը, որ ինքն ըստ ինքեան ֆիզիօ-  
լոգիական գործողութիւն է, բժշկի օգնութիւնն է  
պահանջում։ Յաճախ մենք տեսնում ենք՝ ինչպէս  
վաղաժամ ամուսնութիւնների դոհերը մեռնում են  
գժուար ծննդաբերութեան պատճառով, կամ ինչպէս  
համեմատաբար ողորմելի կնանք են վարում նրանք  
իրանց նուազած մարմնով։

Ուշ ամուսնութիւններ։ Տղամարդու և կնոջ  
սեռական գործարանները—առաջինինը յիսունեհինգ  
տարեկան, իսկ երկրորդինը քառասուն տարեկան  
ժամանակ կորցնում են իրանց կննդանութիւնը,  
թարմութիւնն ու երիտասարդական ոյժը։

Մենք ընդհանրապէս ենք խօսում, չասկանալի  
է, որ չնորհի կազմութեան, տեմպերամենտի, առող-  
ջութեան, լաւ կամ անկանոն վարքի և ուրիշ պատ-  
ճառների, ուժասպառութեան ժամանակը միքանի-  
սի համար հասնում է շուտ, միւսների համար—  
ուշ։ Սյդժամանակ տղամարդու ոյժերն արդէն չեն  
լինում առաջուայ նման կատարեալ, սաղմը շի լի-  
նում այնպէս յորդառատ և նա մինչև անգամ կոր-  
ցնում է իր բեղմնաւոր յատկութիւնները։ Թէ և մար-  
մինը բոլորովին առողջ է, բայց ցանկութիւններն

արդէն նչ այնպէս յաճախս են, ոչ էլ այնպէս տառա-  
տիկ զգալիք։ Սյատեղ արդէն չի գործում բնազդը,  
այլ միան երեսակայութիւնը։ Նոյն երեսութները նը-  
կատվում են և կանանց մէջ, յայտնի քան է որոշ  
բացառութիւններով։ Փիզիքական սէրը այլաւ չի  
գրգռում նրանց ուղեղը, սեռային մերձաւութեան  
պահանջը այլս չի հրավորում։ Կանանց մեծամաս-  
նութիւնը երեսուն և հինգ տարուց մինչև քառա-  
սունը սկսում է զիքանալ, իսկ զիքութիւնը, ինչպէս  
յայտնի է, որդենութեան ընդունակութեան անկ-  
ման նշանն է։ Շատ կանալը այդ հասակում չեն ու-  
զում կրել իրանց վրայ ամուսնական կապանքները։  
Առհասարակ այդ հասակում երկու սեռերի ծննդա-  
կան գործարանները կորցնում են առաջուայ ոյժը,  
ահմ թէ ինչու տարածամ ամուսնութիւնից ծնուած  
երեխանները լինում են աւելի թոյլ և տղեղ, քան  
թէ այն երեխանները, որոնք ծնվում են չափահատու-  
թեան ժամանակ կապուած ամուսնութիւնից։

Անհաւսար ամուսնութիւններ։ Սյդպիսի ա-  
մուսնական կապակցութիւնները գատապարտելի ե-  
րեսի թէ և պէտք է արդեկուի օրէնքով։ Այդ-  
պիսի ամուսնութիւնները կորստաբեր են թէ ամու-  
սններից կրտսերի և թէ նրանց երեխանների ա-  
ռողջութեան համար, եթէ միայն ծնուեն նրանք։  
Դեռահաս տղամարդիկ, որոնք որիէ նիւթական դի-  
տումով վճռում են անհաւսար ամուսնութիւն կա-  
պել, շուտով ուժասպառվում են։ Սյն ջանէլ կինը, որ  
ամուսնում է տարիքաւոր դղամարդու հետ, թա-

ռամում է, որովհետեւ նաև զգուանքով է վերաբեր-  
վում դէպիսիր ծերամուսինը։ Ոնճաւասար ամուս-  
նութիւնից ծնուած երեխանները լինում են տկար-  
թոյլ և տրամադրուած դէպիսիր հիւանդութիւնները։  
Մանկութեան հառակում նրանք լինում են մեկա-  
մաղձուտ, անբաւական, որ բոլորովին յատուկ չպէտք  
է լինէր նրանց հասակին։ Նրանցից շատերը հա-  
զիւ են հանգում 14—15 տար։ Խակայն և նրանք,  
որոնք դիմանում են, առհասարակ ձանձրալի կեանք  
են վարում։ Այսամբ ինչ այսաւ մը պար զանց ունի-  
ւուց զանց մրցաւ և ավագան մաժերաւ շ—8  
ՍԵՐԱԿԱՆ ԽՈՐՃԱՐԱՆՆԵՐԸ ԵԽ ՕՎՈՒԼԵԱԹԻԱ  
— ամ ոպոր զանց նարանուած բյւմադաւոն մզմիսա-  
ւուց սեռական գործարանները երկու դասա-  
կարգի և բաժանվում՝ արտաքին և ներքին սեռա-  
կան գործարաններ։

Ներքին սեռական գործարաններն են։ 1) հեշ-  
տոցը, 2) արգանդը, 3) ձուարաններն ու ձուանցը-  
ները կամ ֆալլօպիտները։  
Արտաքին սեռական գործարաններն են։ 1) ի-  
գամուտքը կամ իգամեղը, 2) մեծ և փոքր շրթերը,  
3) կնաքիրը, 4) միզուլլը, 5) բարտոլինեան գեղ-  
ձերը և 6) կուսաթազանթը։

Արտաքին սեռական գործարաններին են սբա-  
կանում նոյնպէս ծծերը, և առաջայի սեռական  
կնոց ներքին սեռական գործարանների ամե-  
նաէական մասը կազմում են ձուարանները։ Սյատեղ  
արբունքից մինչև 45 տարեկան հասակը մօտա-

ըապէս անընդհատ հասունանում են կնոջ ձուերը։  
Երբ կինը առողջ է, հասունացած ձուերը պար-  
բերաբար դուրս են նետվում ամեն ամիս 1—2  
հատ։ Չուի այդ պարբերաբար հասունանան ու ձը-  
տարանից զուրս նետուիլը կոչվում է օվուլեացիա։  
Թէև ձուարաններում դեռ երեխայական հասակում  
էլ գտնվում են հասունացած ձուեր, բայց նրանք  
այդժամանակ առհասարակ դուրս չեն նետվում,  
թէև պատահում են բացառիկ դէպքեր էլ, Կան փաս-  
տեր, որոնք ցոյց են տալիս, թէ կանայք յլացել են  
8—9 տարեկան հասակում։ Սակայն մենք չենք սը-  
խալուիլ, եթէ ասենք, որ կանոնաւոր օվուլեացիան,  
այսինքն ձուարանից հասունացած ձուի դուրս նետ-  
ուիլը, սկսվում է դաշտանի առաջին անգամ երեա-  
լուց միքիչ վագ։ Հասունութիւնը բնորոշող երեսոյթ-  
ների, այն է՝ օվուլեացիայի և դաշտանի մէջ ֆիզիօ-  
լոգիական կապ կայ. Եւ այդ հասկանալի է, որովհե-  
տև մէկ կողմից ձուարանների բացակայութեան ժա-  
մանակ (օր. նրանց կտրելուց յետոյ) ընդհատվում է  
դաշտանը, միւս կողմից դաշտանի բացակայութեան  
ժամանակ սաղմնառութիւնը չի լինում։ Բայց դրա-  
նից յայտնի է որ այդ երկու երեսոյթները առհա-  
սարակ միաժամանակ են տեղի ունենում։ Բայց թէ  
ինչումն է արդեօք դրանց ներքին կապը, այդ մինչև  
այժմս, կարելի է առել, յայտնի չէ։

Դ Ա Շ Տ Ա Ն

Դաշտանը արգանդի զարկերակներից արեան  
պարբերական հոսումն է, որ կրկնվում է բաւակա-  
նին կանոնաւոր, միջին թուով ամեն երեք շա-  
բաթից յետոյ և տեսում է 3—7 օր։ Նայած կլի-  
մային, հասարակական դրութեանը, կազմուածքին,  
ընաւորութեանը եայն, դաշտանի առաջին անգամ  
երեալն էլ փոխվում է դրա համաձայն։ Այսպէս, օր.  
տաք երկիրներում դաշտանն սկսվում է 11—14,  
բարեխառն երկիրներում 18—16, ցուրտ երկիրնե-  
րում 15—18 տարեկան հասակում, ինչպէս ցոյց  
են տալիս Դիւբուայի և Պաժոյի դիտողութիւնները։  
Զափից դուրս ուշացած դաշտանը կախուած է օր-  
գանիզմի ընդհանուր յարատև հիւանդութիւնից—ա-  
րեան պակասութիւնից, գեղձախտից եայլն, կամ  
ներքին սեռական գործարանների վատ զարդացու-  
մից։ Կերակրող կանանց սերմնառութեան դաշտա-  
նը ընդհատվում է և նրանք համարեա երեք շեն  
յղանում։ Հակառակ դէպքում, այսինքն երբ դաշ-  
տանը չի ընդհատվում, կանայք յաճախ են յղա-  
նում։ Հարուստ օրիորդների դաշտանն աւելի առաջ  
է երեսում, քան խեղճերինը, ինչպէս նաև բաղաքնե-  
րում աւելի է առաջ, քան գիւղերում։ Առաջ կար-  
ծում էին, թէ դաշտանը մի այնպիսի գործողութիւն  
է, որի չնորհիւ մաքրվում է արինը, և արեան կեղ-  
տոտ գոյնն ու վատ կարծեա արդարացնում

էին այդ կարծիքը։ Սակայն արեան այդ զանագանութիւնը կայանում է նրանում, որ նրա հետ արգանդում և հեշտոցում լորձանիւթ է խառնվում, իսկ նրա վատ հոտը առաջ է գալիս նրա կազմարոժումից։

Մենք արդէն ասացինք, որ դաշտանի և օգուլ լեացիայի մէջ կապ կայ։ Հիմնուելով դրա վրայ, այժմո դաշտանի երեալու պատճառը այսպէս են բացատրում։ Կնոջ սեռական գործարանները ենթարկում են արեան պարբերաբար մակընթացութեան (հոսման) և այդ պատճառով ուռչում են։ Միևնույն ժամանակ ձուարանից դուրս է նետվում ձուի կը, որ եթէ չի միանում սերմորդի հետ, ոչնչանում է։ իսկ արգանդի ուռչելու հետևանըը դաշտանի երեալն է լինում։ Ընդհակառակը, եթէ ձուիկը միանում է սերմնորդի հետ, նա վերջնականապէս կանգ է առնում արգանդի լորձաթափանթի վրայ, որ այժմո դարգանում է ձուիկի թաղանթներից մէկն է դառնում։ Ահա թէ ինչու այդ դէպքում դաշտանն ընդհատվում է։

Դաշտանը բնական, փիզիօլոգիական երանյթէ, որ, ինչպէս առացինք, կրկնվում է բաւականին կանոնաւոր, միջին թուով ամեն երեք շաբաթից յետոյ, Սակայն դաշտանի այդ կանոնաւորութիւնը երբեմն խանդակում է, պատահում է, որ նա բոլորին ընդհատվում է, կամ երեսում է ժամանակից դուրս եղանակի մակարձակի փոփոխութիւնը, մանաւանդ ուռքերը սպուր ջրի մէջ դնելը։ Կայ մի հասակ, երբ կանանց դաշտանը վերջնականապէս դարգանում է, ուս մօտաւորապէս 40—50 տ. հասակնէ արագածանի այդ դարգանումից առաջ միքանի ամիս, մինչեւ անդամ մի տարի և աւելի առաջ կնոջ օրիքանիզմում տեղի են ունենում զանագան խանդակումներ։ Մինչդեռ գեղջկուհների հա-

կելքթից, բերանից, մատների ծայրերից և մարմնի մասերից։ Սակայն այդ բոլորը հիւանդու երևյթներնեն, որ ամենից յաճախ պատահում են ժոյը, սակաւարին, դժգունախտառը կանանց մէջ։ Դաշտանի կանոնաւորութիւնը, այսպէս ասած, կանանց առողջութեան ցերմաշափնէ և որդեծնութեան ընդունակութիւնն ունենալու նշանը։ Այդ պատճառով դաշտանի չնչին անկանոնութիւնը, կամ նրա վատարեալ դադարումը պէտք է ենթարկել ամենալուից բժշկութեան։ Որպէսզի կանայք կարողանան պաշտպանել իրանց՝ դաշտանի այդ անկանոնութիւններից, նրանք պէտք է այդժամանակ աւելի կանոնաւոր կեանք վարեն և սովորականից աւելի դպոյշ լինեն։ Ամենից առաջ անհրաժեշտ է խուսափել գրգռիչ կերակուրներից և խմիչքներից։ Գինին, գարեջուրը, թունդ թեյը, սուրճը, քացախը և այլն վնասակար են։ Սննդայման արգելվում է դաշտանի ժամանակ գարելը, ձի նստելը, անքուն գիշերներ անցկացնելը, չափից դուրս աշխատանքը, կատարեալ անդորթութիւնը և այլն Զափից դուրս վնասակար են և եղանակի յանկարծակի փոփոխութիւնը, մանաւանդ ուռքերը սպուր ջրի մէջ դնելը։ Կայ մի հասակ, երբ կանանց դաշտանը վերջնականապէս դարգանում է, ուս մօտաւորապէս 40—50 տ. հասակնէ արագածանի այդ դարգանումից առաջ միքանի ամիս, մինչեւ անդամ մի տարի և աւելի առաջ կնոջ օրիքանիզմում տեղի են ունենում զանագան խանդակումներ։ Մինչդեռ գեղջկուհների հա-

մար այդ խանգարումները համարեա աննկատելի  
են անցնում, բարձր դպասակալրդի կանայք այդժա-  
մանակ չափից դուրս շատ և երկար տանջվում են:  
Կանանցից շատերը այդժամանակ զգում են գլխա-  
ցաւ, գիւրագրվիուն, գառնում, այլև ցանկութիւն  
չեն ունենում աշխատելու: Բացի դրանից շատ անգամ  
խանգարվաւմ են ստամոքսն ու աղիքները, արգան-  
դից արիւնահոսութիւնն է լինում ևայլն: Մյդ հասակից  
յետոյ կանայք առհասարակ հանդիսաւ և առողջ կա-  
րող են ապրել մինչեւ լորին ծերութիւն:

**ՍԱ ԶՄՆԱՌՈՒԹԻՒՆ**  
Սազմառութիւնը մենք հասկանում  
ենք այն փոփոխութիւնները, որոնք պատճանում են  
կնոջ ձևիկի և տղամարդու մերժնորդի խաւնուե-  
լուց և որոնց հետեանքնէ սպամի գարգացումը:

Սերմնային թելիկները զաւակատուն մտնելուց յիտոյ վնում են դէպի ձուանցրները, Միկնոյն ժամանակ ձուարանից գուրս է զալիս ձուիկը և ընկնելով ձուանցրի մէջ, առաջ է վնում դէպի զաւակատունը, ծանալաբճին այդ ձուիկը հանդիպելով սերմնորդին, խառնվում, ձուլվում է նրա հետ և այդ դէպրում սաղմնառութիւնը արդէն կատարուած է՝ նախ քան սաղմնաւորուած ձուիկի զաւակատուն մտնելը, վերջինի լորձաթաղանթը փոփոխութիւնների է ենթարկվում. Հինգ այդ փոփոխուած լորձաթաղանթի վրայ է ամրանում և ընկդմվում նրա

մէջ ձուիկը և սկսում հետզիետէ զարգանալ: Երբ  
կատարվում է սաղմնառութիւնը, դաշտանն ընդ-  
հատվում է, իսկ այն արիւնը, որ մինչ այդ դուրս  
էր հօսում, այժմս մնում է մօր օրդանիզմում՝ նրա  
արգանգում զարգացող սաղմի մնունդի համար: (Ահա  
այդ է այն պատկերը, որ ստացվում է մօտաւորապէս  
սաղմնառութեան 13-րդ օրը):

զգօ յամարդար չուժերուն? Առաջ և ցիցան շնչել  
ունց մմաւար ցվավի նախամնրաս չ նրանքասափ  
այսոր քա չմին դա ցմայս միտ իսկ չ նրանքա՞  
այս հանրիմարդո զոն չ եւսմի անելու նրանուն զն  
ա՞Յ) դասաւ զրա ՓԼՈՒԽ ԽԱՐԴԱՐԴ ԽԱՐԴԱՐԴ կա ցղմիար միտ չ քա

Յ Հ Ո Ւ Թ Ի Ւ Ն

իմաստար ցմանահամ դասաւար մասն  
Մենք արդէն ասացինք որ սաղմնառութիւն  
նից անմիջապէս յետոյ սկսվում է յլութիւնը: Յղու-  
թիւնը մի այնպիսի գրութիւն է, որ պահանջում է  
մօր կողմից մեծ ուշադրութիւն: Բժշկի պարտակա-  
նութիւնն է ցոյց տալ յղի կնոջը այն կանոնները,  
որոնց նա պէտք է հետիի, նախ քան մայր դառնալը:  
Այդ պատճառով ես կ'աշխատեմ ըստ կարելոյն շափ  
ցոյց տալ այդ կանոններից գլխաւորները:

Սյն ըոպէից, երբ կինը նկատում է, որ ինքը  
յղի է, նրա համար սկսվում է մի այլ դեր—  
մօր դերը: Բոլորովին նոր, մինչ այդ անձանօթ  
մի զգացմունք տիրում է երիտասարդ կնոջ որտին,  
որ պատրաստվում է մայր դառնալու: Կանանց մե-  
ծամասնութիւնը յղանում է, առանց որ իրանք նը-  
կատէին այդ, թէկ կան միքանի նշաններ, որոնց  
չնորհիւ կարելի է ենթագրել, թէ սաղմնառութիւ-  
նը կատարուել է: Օր. յլութեան սկզբին շատ ան-  
գամ կանանց սիրտը խառնում է, նրանք ործկում  
են, մանաւանդ առաւօտները, գլխացաւ, ատամնա-

ցաւ են զգում ևայն նրանց նեարդային համա-  
կարգութիւնը գրգռվում է, փոխվում է արեան բա-  
ղադրութիւնը, որ այժմ սնունդ պէտք է տայ ոչ  
միայն մօր կաղմուածքին, այլև նրա արդանդում  
զարգացող սաղմին: Դրանով են բացատրվում ան-  
ընութիւնը, վրդովեցուցիչ երազները, սրտի անկա-  
նոն և սովորականից աելի արագ բարախումը: Երբ  
ընդհատվում է դաշտանը, կինը աելի է համոզ-  
վում, որ ինքը յղի է: Բայց այդ բոլոր նշանները  
միմիայն հաւանական են: Թէկ կան այնպիսի նը-  
շաններ ես, որոց չնորհիւ միշտ անսխալ կարելի է  
ասել, որ կինը յղի է: օրինակ՝ սաղմի սրտաթրո-  
ֆը, որ կարելի է լսել ծրու ամսից սկսած: Բայց  
այդ նշանները միմիայն բժշկին են մատչելի: Յղու-  
թիւնը հիւանդութիւն չէ, այլ Փիզիօլոգիական մի  
գործողութիւն: Ծնկ ուրեմն այդ գիտակցութիւնը  
պաշտպանէ ալագայ մայրերին այն ծանր և ճնշող  
մտքերից, որոնք պատում են նրանց նոյն ըոպէից,  
երբ նրանք յղանում են: Սակայն չնայելով դրան,  
նա կարող է երբեմն առաջացնել որովայնի գործա-  
րաններից միքանիսի լուրջ խանգարումն: Մանա-  
ւանդ այդ տեղի է ունենում առաջին յղութեան ժա-  
մանակ: Այդ պատճառով, երբ երիտասարդ կինը  
նկատում է, որ ինքը յղի է, նա պէտք է կրկնակի  
ուշագրութեամբ հետիի պահեցովութեան կանոննե-  
րին: Այդ կանոնները վերաբերում են մարմնին և  
հոգուն: Սկսենք առաջիններից:

անո՞ւ միլորդամի՞ ըմայի՞ մյաս և նոր մա ուց  
առ մարդութեան սուռշագաւզութիւն ուրդար  
չա բայ և զայի բանու և նեա զա զայլ նուրար  
հայրակուր, Յղի կանայք միծ մասամբ հեշտ  
են մարսում կերակուրը: Կանանցից շատերը, ո-  
րոնք յղութիւնից առաջ որևէ ստամոքսային խան-  
գարումն են ունենում, նոյնիսկ բոլորովին լաւանում  
են յղութեան ժամանակ (Ամմօն):

Սակայն դրանից չի դուրս գալիս, թէ նրանք  
անպատիժ կարող են գործ ածել ամեն տեսակ կե-  
րակուր, որպէսզի սնունդ տան և սակմին, որին  
կրում են իրանց արգանդում: «Երկուսի տեղ պի-  
տի ուտեն», ասում են պառաւ կանայք. իսկ  
մենք կ'ասենք—ոչ երբէք: Այդպիսի անմտութեան  
վտանգը հասկանալու համար, բաւական է բացա-  
տրել, որ սաղմը յղութեան առաջին շրջանում, այս-  
ինքն առաջին շորտ ամիսների ընթացքում դեռևս  
այնքան փորք, այնքան աննկատելի է լինում, որ  
կինն ինքը գեռ չի զգում նրա ծանրութիւնը: Գր-  
անից յետոյ դժուար չէ համոզաւել, որ յղութեան  
առաջին ամիսներում ամենափոքր անշափառու-  
րութիւնը ուտելու մէջ՝ յանուն երեխայի, կը վնասի  
թէ մօր առողջութեանը և թէ սաղմի զարգաց-  
մանը: Այդ դէպքում առաջին պայմանը—շափա-  
տորութիւնն է: Ինչ վերաբերում է կերակուրներին,  
հարկաւոր է տօել, որ յղի կանայք անսպայման պէտք  
է խռասինք դժուարամարս կերակուրներից և զըր-  
գուիչ խմբչքներից: Նրանց կերակուրը պէտք է թե-

թէ, դիւրամարս և սննդարար վինի: Աւելի օգտա-  
կար է կործածել բուսեպին կերակուրը մսեղէնի հետ:  
Խորհուրդ ենք տալիս բուսեպէն կերակուրնե-  
րից կործածել՝ բրինձ, մարգարտահատ (որլուայ  
քրցա), սպանաղ, բազով, գետնախնձոր, զազար,  
ծաղկաւոր կաղամբ, ծմել (առնետե) կային: Ըսդ-  
հակառակ՝ սիսեռ, լորի, ոսպ, մաղաղանոս, ծնե-  
բեկ, նեխուր (շելդերեյ), կաղամբի պէսալէս տե-  
սակները, բացի ծաղկաւորից, ևայլն, աւելի լաւ է  
չզործածել, մանաւանդ յղութեան առաջին ամիս-  
ներում:

Ուրիշ դժուարամարս կերակուրներն են՝ ալիւ-  
րից պատրաստած զանազան տեսակ իւղուտ կերա-  
կուրները, իւղուտ միսը, սագի և խոզի միսը, նոյն-  
պէս նոր թխած հացը և թժու կերակուրները:  
Պասուայ կերակրի համար աւելորդ է մինչև անգամ  
խօսելը. իր կոշտ և դժուարամարս յատկութիւննե-  
րով, պարզ է, որ նաև բոլորսվին անհամապատա-  
խան է յղի կնոջ համար:

Ալիօնօլային խմիչքները, մանաւանդ արազը,  
շատ վնասակար են յղի կնոջ համար, նոյնպէս թունդ  
թէյն ու տուրճը: Այդ պատճառով առողջ կանայք  
պէտք է խուսափին այդ տեսակ խմիչքներ կործա-  
ծելուց: Ըսդհակառակ՝ թոյլ, ուժասպաւ կանանց  
համար զրախառն գինի, զարեջուր, կաթ և սուրճ  
կործածելը մինչև անգամ օգտաւէտ է:

Յղութեան երկրորդ շրջանում սաղմը, որի մէջ  
այդ հազիւ նկատելի էր, սկսում է շուտ զարգանալ

և ապահանջել մօրից սննդաբար հիւթերիւ աւելի մեծ  
քանակութիւնն, և ընութիւնը գրգռելով յղի կնոջ  
ախորժակը, ցոյց է տալիս նրան, որ հարկաւոր է  
շատ ստեղլ. Այդժամանակ սննդովի պակասութիւնը  
նոյնքան վտանգաւոր կը վիճէր մօրս պտուղի համար,  
որքան (նրա անշափառութիւնը) յդութեան  
առաջին ամիսներում:

Շոր, Երբոր կինը նկատում է յդութեան առաջին նշանները, նա խկոյն պէտք է թողնի կորսէթը և ամեն մի շոր, որ սեղմում է նրա մէջը: Սյժմս շորը չպէտք է խանգարէ մարմնի բարոր մասերի ազատ զարգացմանը, որոնց ծաւալը մեծանում է սաղմի զարգացման հետ, մանաւանդ այդ անհրաժեշտ է յդութեան երկրորդ շրջանում, Բացի դրանից յղի կինը պէտք է կանոնաւոր կերպով պաշտպանի իրան ցրտից:

Ահա այն պայմանները, որոնք անհրաժեշտ են յդի կնոջ և նոր ծննդկանի առողջութեան համար:  
Սեղմող շորի վնասակարութիւնը, մանաւանդ յդութեան ժամանակ, հասկանում էին և մեզանից շատ առաջ հռոմայեցիները: Հռոմէական օրէնքը հարկադրում էր կանանց թուղնել յդութեան ժամանակ գօտիները, որ նրանք սովորաբար կրում էին, սպառնալով տուգանք վերցնել, մինչև անզամ բանտարկել: Իսկ ֆրանսիական «enceinte» բառը, այսինքն յդի, նշանակում է «sans ceinture» — առանց գոտիի:

ԱՇԽԱՑԱՆՔ ԵՒ ՀԱՆԳՄԱՆԹԻՒՆ

Յդութեան առաջին շրջանում ականանց մեծամասնութիւնը հակումն ունի դէպի հանդիսութիւնն ու քունը: Յդի կանայք ցերեկով ամրող ժամաներով կամ քնում, կամ նիրհում են: Այդպիսի դրութիւնը, բացի նիանից, որ վատ տրամադրութեան պատճառ է դառնում, ունի և աւելի լուրջ հետեանք. այն է շատ անդամ անդադղ ծնունդ: Սյդ պատճառով յդի կինը պէտք է կատարէ իր սովորական, սակայն ոչ ծանր ընտանեկան պարտականութիւնները:

Եատ օգտակար է նոյնպէս ամեն օր մի փոքր զրօննել, մանաւանդ մեր կանանց համար, որոնց մեծամասնութիւնը գեռկա փակ կեանը է վարում:

Բայց միենոյն ժամանակ յդի կանայք պէտք է խուսափեն արագ ման զալուց, պարելուց, վազելուց, թռչելուց և այլ ծանր չարժումներից: Աշխարհիկ կանայք պէտք է հրաժարուեն աղմկալի բաւականութիւններից, խնճոյըներից, պարահանդէսներից, թատրոններից, մի խօսքով՝ այն ամենից, ինչ որ ստիպում է գիշերը ցերեկ դարձնել, իսկ ցերեկը՝ գիշեր: Յանուն մայրական դպացմունքի՝ յդի կինը պէտք է զոհէ իր հաճոյըներին ու ցանկութիւնները, իր պշընքը (կոկետство) և բացառապէս մանկան համար ապրի:

ՄԱՅՐՈՒԻԹԻՒՆ ԵՒ ՄԱՅՐՈՒՐ ՕԴ

Եթէ մաքրասիրութիւնը առհասարակ անհրաժեշտ է մարդու առողջութեան համար, աւելի և դրա վրայ ուշադրութիւն պէտք է դարձնեն յդի կանայք։ Եյդ գէպքում առաջին պայմանն է՝ մարմիք և մանաւանդ սեռական գործարանների յաճախ լուսանալը։ Լուանալու համար ամենից լաւ է գործածել եռացրած և մինչև  $14^{\circ}-15^{\circ}$  սառեցրած ջուր և խոնածուծ (ցիցրօսկոպիչеский) բամբակ։ Այն գէպքերում, երբ սեռական գործարաններում տաքութիւն և քոր է դդացվում, որ յդի կանանց մէջ շատ է պատահում, հարկաւոր է աւելացնել ամեն մի բաժակ ջրին մի թէյի գգալ բորային թթուատ (борная кислота): Բայց առհասարակ այդ գէպքում պէտք է զգոյց լինել և առաջ բժշկի խորհուրդը հարցնել, Սրբկելու համար առհասարակ գործ և ածում Եսմարխի թասը (кружка):

Ֆրանսիայում և Օնդիլիայում համարեա ամեն մի փոքրիշատէ մաքրասէր կին իր պարտականութիւնն է համարում լուանալ և սրսկել սեռական գործարանները և Եսմարխի թասն ու բիզէն նրա տուալէտի անհրաժեշտութիւնն են կաղմում։ Ի նըկատի առնելով այն հանդամանքը, որ այդ տեսակը մաքրասիրութիւնը ծննդային տհնդի առաջն է առնում, մենք կը ցանկայինք, որ մեր մէջ ևս տարածուէր այդ խելացի սովորութիւնը:

Ակերջապէտ անհրաժեշտ է նոյնպէս միշտ մաքրել սենեակների օդը, թէ նրբան մեծ նշանակութիւն ունի մաքրու օդը մարդու առողջութեան համար, աւելորդ է մինչև անգամ բացատրելը։

Հայութիւնն ամ և առնելու մասնաւոր ամ կարևոր առջոջը ՊԱՀԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Յդի կնոջը հարկաւոր է նաև հոգեկան կատարեալ հանկատութիւն։ Սյդ պատճառով թէ ամուսինը և թէ չրջապատղները պէտք է չափազանց ուշադիր և ներողամիտ լինեն դէպի յդի կինը։ Միւս կողմից էլ յդի կինը պէտք է յաղթէ իր հաճոյքներին (բարիչ): Նա չպէտք է հիասթափուի, որ տանջվում է. նա պէտք է հասկանայ, որ այդ տանջանքներից յետոյ նրան սպասում են ուրախութիւնն և երջանկութիւնն, որովհետեւ շուտով նա մայր է գառնալու. Յդի կանայք պէտք է խուսափեն ամեն մի սաստիկ յուզմունքից, զայրութիւց, սարսափից, անչափ ուրախութիւնից, զարմանքից, վախից և այն ամենից, ինչ որ կարող է ցնցել նրանց նեարդային համակարգութիւնը։ Յաճախ ուղղմի մահուան պատճուը լինում է մօր սաստիկ հոգեկան ցնցումը։ Ուրեմն խաղաղ կեանք և հոգեկան հանգստութիւնն ահա այն անհրաժեշտ պայմանները, որոնք հարկաւոր են պատուի կանոնաւոր զարգացման, յղութեան նօրմալ ընթացքի և բարեյացող ծննդաբերութեան համար։ Ամեն մի կին, որ փափագում է առողջ և գեղեցիկ երեխայ ունենալ, պէտք է հե-

տեէ այդ կանոններին։ Այդ նոյնքան հարկաւոր է մօր համար, ժրաբան և այն արարածի համար, որին աշխարհ բերելու է պատրաստվում։ զան վայր մայն

Եատ կանայք, մանաւանդ նրանք, որոնք առաջին անգամ են յղանում, վախենում են ծննդաբերութիւնից, կարծելով որ այդ գործողութիւնը պահանջում է անտանելի տանջանքներ և բժշկի անպայման օգնութիւն։ Սակայն նրանք պէտք է միշտ յիշեն, որ ծննդաբերութիւնը հիւանդուտ երեսյթ չէ, այլ ֆիզիոգիական մի գործողութիւն, որ մեծ մասմբ բարեյացող է վերջանում։

Մինչև այժմա մենք խօսում էինք ընդհանրապէս յդի կանանց պահեցողութեան մասին և զլսաւորապէս մինչև յղութեան վերջին ամիսները։ Այժմս մենք մանրամասն կանգ կ'առնենք այն պատրաստութիւնների վրայ, որոնք վերաբերում են յաջող ծընդհարերութեանը, ծննդաբերութեան յաջորդ շրջանին և ապագայ երեխայի բնական կերպով կերպակրելուն։ Այդ պատրաստութիւնները բաւականին մեծ նշանակութիւն ունեն, որովհետև նրանցից է կախուած ծննդկանի և երեխայի առողջութիւնը։ Ամենից առաջ յդի կինք պէտք է հարցնէ իրան, կարող է արդեօք ինքը կերակրել երեխային։

Մեր եպասէր կիանքում մենք հանդիպում ենք մայրերի, որոնք հրաժարվում են երեխաներին կերակրելուց, որպէսզի չզրկուն միջանի տեսակ ուտելիքներից, զանազան բաւականութիւններից, զըռուարճութիւններից եայլն։ Եթէ մայրը չնայելով այն

առաւելութիւններին, որ բնութիւնը պարզեց է երեխային կերակրելու համար, հրաժարվում է իր մկական պարտականութիւնից, նա արժանի չէ մայրը անունը կրելու։ Յունաց պատմաբան Պլուտարքոսն ասում է. «Բնութիւնը ինքը ցոյց է տալիս, որ մայրերը պէտք է կերակրին նրանց, որոնց ծնում են։ Դգուր չէ, որ նա կաթ է տուել այն կենդանիներին, որոնք ծնում են։ Կերակրելու չնորհիւ մօր սէրը դէպի իր փոքրիկը մեծ անում է»։

Բարեբաղդաբար, մեզանում այդպիսի մայրերի թիւը չնչին է. Ուրիշ բան է, եթէ մայրը հրաժարվում է կերակրել երեխային զանազան յարգելի պատճառներից զբգուած։ Սյն է՝ 1) Ե՞րբ մայրը չպէտք է կերակրէ երեխային, որ չվնասէ իր և երեխայի առողջութեանը. 2) Ի՞նչպիսի պայմաններ են հարկաւոր, որ մօր կաթը օգտաւէտ լինի երեխայի համար։ Բժշկի գործն է վճռել, թէ զարգացել են արդեօք կնոջ ծծերը այնքան, որ կարգան երեխային բաւական կաթ տալ և արդեօք կաթի յատկութիւնը բաւականութիւն տալիս է երեխայի մնունդի բնական պահանջներին։

Կան կանայք, որոնց յղութիւնը կանոնաւոր է անցնում, սակայն նրանց ծծերը մնում են բոլորովին անզարգացած և անպէտք կերակրելու համար։ Թոյլ, սակաւարիւն, ներվային կանայք, որոնք տրամադրուած են դէպի թոքախտը, ցնցումները, մաշող հիւանդութիւնները և գեղձերի ուռոյցը, որոնք տանչվում են հնացած սիֆիլիսով, յարատել յօդա-

ցաւով, ընկնաւորութիւնսկ և արիւնհոսութիւններով, որոնք շափից դուրս զգայուն են և այլն, վերջապէս որոնց վրայ բարդուած են որոշ հասարակական պարտականութիւններ, բոլոր այդ կանայք չպէտք է իրանք կերակրեն երեխաներին, որովհետև գրանով նրանք միայն կը վնասեն թէ իրանց և թէ երեխաների առողջութեանը<sup>\*)</sup>:

Ըսդհակառակը՝ այն կանայք, որոնք բոլորովին առողջ են, խաղաղ քնաւորութիւն ունեն, որոնց ծծերը զարգացած են, կեանրի պայմանները արգելը չեն հանդիսանում, երեխաներին կերակրելը պէտք է համարեն իրանց սուրբ պարտականութիւնը։ Միմիայն մօր կաթն է ներկայացնում երեխայի համար իսկապէս քնական և նպատակայարմար կերակուր։ Այդ պատճառով երբ մայրը առանց լուրջ պատճառների հրաժարվում է իր երեխային կերակրելուց, նա միզանչում է և յաճախ երեխայի հիւանդութեան և մահուան պատճառ դաւնում։

Մենք այժմս կը տեսնենք, որ մօր հրաժարուել երեխային կերակրելուց, անպատիժ չի անցնում

\*) Վերջին տարիները բժիշկները, մանաւանդ Գրանտավում, աշխատում են ոբքան կարելի է սահմանափակել այն պայմանները, որոնք մինչև այժմս արգելը են հանդեպանում մօր կերակրելուն. նրանք պնդում են, որ մինչև անգամ թոքախտու մայրը պէտք է ինքը կերակրէ երեխային։ Թէ որքան ճիշտ է այդ կարծիքը, դեռևս դժուար է ասել:

և մօր համար, Երբ կատարվում է սաղմնառութիւնը, դաշտանը, ինչպէս յայտնի է, ընդհատվում է, իսկ այն արիւնը, որ մինչ այդ դուրս էր հոսում, այժմս մնում է մօր օրգանիզմում՝ նրա արգանդում զարգացող սաղմի ոնունդի համար։ Երեխայի ծնունդից յետոյ այդ արիւնը ուղղվում է դէպի ծծերը, որտեղ նրանից պատրաստվում է կաթ։ Ոյդպիսով յլութիւնից յետոյ սկսում են գործել կաթնագեղերը։ Որդանդը և միւս սեռական մասերը այժմս պէտք է հանգստանան և ստանան իրանց առաջուայ ոյժն ու ամրութիւնը, որպէսզի պատրաստուեն նոր դաշտանի և միննոյն ժամանակ նոր սաղմնառութեան համար։ Ի՞նչպէս և ինչ նպատակով կարելի է խախտել բնութեան այդ օրէնքը։ Ինչ հետեանք կարող է ունենալ կանանց ցանկութիւնը՝ ծննդաբերութիւնից յետոյ բռնի խափանել արեան մակընթացութիւնը դէպի ծծերը և այդպիսով զրկել երեխային նրա ամենաքնական կերակրից։ Վերջապէս կարող է արդեօք այդ տեսակ վարմունքը անպատիժ մնալ մօր առողջութեան համար։ Ոչ երբէք։ Եթէ պատահում էլ են այդ տեսակ դէպքեր, յամենայն դէպս՝ զրանք շափից գուրս հազուագիւտ երեսյթներ են։ Էայց լինում են և այնպիսի դէպքեր, երբ մայրը մեծ ուրախութեամբ կը կերակրէր իր երեխային, եթէ դրան արգելը չլինէին նրա անպատրաստ ծծերը։ Այդ պատահում է մանաւանդ առաջին ծննդաբերութիւնից յետոյ։ Այդ պատճառով ամեն մի կին, որ պատրաստվում է ինքը կերակրել երե-

խային, պէտք է պատրաստէ իր ծծերն այնպէս, որ  
երեխան ազատ կարողանայ ծծել, Ահա թէ կինը  
ինչպէս պէտք է պատրաստէ իր ծծերը;

Յղութեան վերջին ամիսները կինը պէտքէ  
արձակ շորեր հագնի, որպէսզի դրանով չխանգարէ  
ծծերի և պտուկների զարգացմանը։ Այդ անհրաժեշտ  
է այն պատճառով, որ արդէն 6-րդ ամսից կաթնա-  
գեղձերը սկսում են պատրաստուել կաթ արտադրե-  
լու։ Այդժամանակ եթէ ծծերը սեղմուի, նրանցից  
կաթ դուրս կը գայ։ Եթէ յզի կինը նեղ շորեր հագ-  
նելով, խանգարում է կաթնագեղձերի բնական զար-  
գացմանը, կամ եթէ նա մրսեցնում է նրանց, այն-  
ժամանակ ծննդաբերութիւնից շատ առաջ արիւնը  
կանգ է առնում գեղձերում։ Փոքր առ փոքր կանգ ա-  
ռած արիւնը սկսում է ճնշել ծծերը, որոնք ամրանում  
են և սկսում են ցաւել։ Յայտնի բան է, որ այդ գէպ-  
ում մտածել անգամ չի կարելի երեխային կերա-  
կրել։ Վերջինը սովորաբար ինքն էլ հրաժարվում է  
ծծել մօր կաթը։ Անհրաժեշտ է այնպէս պատրաս-  
տել ծծի պտուկները, որ երեխան ազատ կարողա-  
նայ ծծել եթէ, օրին։ Նրանք շատ խոր են նստած,  
կամ թէ շատ փոքր են, հարկաւոր և աստիճանա-  
բար դուրս քաշել ծծակով, բերանով, կամ նոյնիսկ  
մատներով։ Եթէ ծծի պտուկները շափից դուրս  
փափուկ և զգայուն են, հարկաւոր է ամեն օր մի  
փոքր արագ, կամ կարմիր գինի քսել, որպէսզի նը-  
րանք կոշտանան։ Եթէ պտուկները շափից դուրս  
ամուր են, որ առհասարակ սակաւ է պատահում,

հարկաւոր է փափկացնել՝ խոզի իւղ կողիլիք կամ  
վաղելին քսելով։ Վերջապէս ծծերի ստուկները  
պէտք է անմայման մաքուր լինեն։ Որքան աւելի է  
մօտենում յզութեան վերջը, այնքան աւելի պէտք է  
կինը երկիւղ կրէ աղմկալի բաւականութիւններից և  
ազգու տալաւորութիւններից, այնքան աւելի զգոյն  
պէտք է լինի իր սովորութիւնների մէջ։

Հոգեկան հանգստութիւնը առաջին պայմանն  
է յզի կնոջ համաց աստիճան մատրած  
Յղութեան երկրորդ շրջանում ամուսինները  
պէտք է բոլորովին հրաժարուն սեռական յարաբե-  
րութիւններից։ Մանաւանդ այդժամանակ հարկա-  
ւոր է ուշադրութիւն դարձնել յզի կանանց մարսո-  
գութեան վրայ։ Ստամոքսի ամենաչին խանգարու-  
մը չափից դուրս վտանգաւոր է թէ մօր և թէ սադ-  
մի համար։ Նոյնչափ վտանգաւոր են՝ սաստիկ տրիս-  
րութիւնը կամ ուրախութիւնը, երկիւղը, յանկար-  
ծակի սարսափը, բարկութիւնը, ատելութիւնը և այլն։  
Այդ տեսակ դրութեան մէջ կանայք յաճախ ենթարկ-  
վում են բազմաթիւ վտանգների, որոնցից ամենա-  
զլիստորներն են արիւնահոսութիւն արդանդից և  
վիժումնեւ

### Վ Ի Ժ Ո Ւ Խ

Վիժումնեւ, ինչպէս յայտնի է, պտղի ժամանա-  
կից առաջ արգանդից դուրս գալն է, — մօտաւորա-  
պէս մինչև 28-րդ շաբաթը։ Դրա պատճառները շա-

փից գուրս բազմաթիւ են և կայանում են մասամբ  
մօր, մասամբ սաղմի հիւանդութիւնների, նոյնպէս  
և վերջինի այլանդակութիւնների։ Առանձին ու-  
շադրութեան արժանի է սիֆիլիսը (վատ ցաւը), ո-  
րովհետեւ ամենից յաճախ նա է առաջացնում վի-  
ժումնեւ

Համեմատաբար յաճախ վիժումն առաջացնում  
են արգանդի յարատեւ հիւանդութիւնները, Բոլոր  
հոգեկան ցնցումները՝ ուրախութիւնն ու վիշտը,  
խանդի և զայրոյթի դիպուածները, յանկարծակի  
երկիւղը, դարմանքը և այլն, նոյնպէս կարող են եր-  
բեմն վիժումն առաջացնել, Վիժումն սկսվում է  
առհասարակ արիւնհոսութիւնից, Եթէ այդ արիւն-  
հոսութիւնը չնշին է, դեռևս յոյս կայ վիժման ա-  
ռաջն առնելու, ընդհակառակը եթէ արիւնհոսու-  
թիւնը առատ է լինում, այդ դիմքում համարեա  
միշտ վիժումն անխուսափելի է։  
Վիժումը մի այնպիսի դրսովութիւն է, որ  
պահանջում է բժշկի անպայման օգնութիւն, որով-  
հետեւ կինը առատ արիւնահոսութիւնից կարող է բո-  
լորովին ուժասպառուել, բացի դրանից նա կարող  
է և վարակուել։

Համեմատաբար յաճախ են ցնութիւնը մասամբ  
մօր, յօ: 008 մինա շա և յօ: 008 մայ այլուր  
շնութեանը հյաղս; Յք նոյն յօ: 008 իւստի միջն  
մա և յօ: վենց նոր հյաղս մնաց զօքրու քնա  
ույժանի և յօ: ՊԼՈՒԽ ԽՎՐ ցնիք զու յըք  
առօն մլայն ԱՅ և վրկարին ցնութեանցարմն  
մա միջնիկ սպեհանմեմ բառ և վիժում սկսացա  
մանը յանդայան բայց նոր յըք մի մեռ  
ծննդաբերութիւնը յղութեան որոշ Փիզիօլո-  
գիական օրէնքների ընական հետեանըն է, առանց  
որի անկարելի է մտածել մարդկութեան գոյութեան  
մասին, Անհրաժեշտ ենք համարում այստեղ համա-  
ռոտակի յիշատակել միքանի շեղումներ ընական  
յղութիւնից, որպէսզի երիտասարդ կանայք կարո-  
ղանան զանազանել առողջ դրութիւնը հիւանդու-  
թիւնից, Դա աւելի ևս անհրաժեշտ է այն պատճա-  
ռով, որ յղութեան ժամանակ հիւանդին աւելի շուտ  
օգնութիւն է հարկաւոր, քան ուրիշ դէպքերում։  
Երբէք չպէտք է անուշաղի թողնել հետեան հիւ-  
անդուտ արտայայտութիւնները, երկարատեւ փորա-  
ցաւը, արիւնահոսութիւնը արգանդից, փորիուծու-  
թիւնը, մանաւանդ տարափոխիկ հիւանդութիւնների  
ժամանակ, փորկապութիւնը, միզարգելը, միզահո-  
սութեան սկակասելը, գեղեախտը, տաստիկ հազը,  
տենդը և այլն։ Այդ բոլորի վրայ յղի կանայք պէտք է  
լուրջ ուշադրութիւն դարձնեն և խոկոյն դիմենի բը-  
ժշկի օգնութեան։

Բնական յղութիւնը մեծ մասամբ տեսում է ոչ  
սպակաս քան 265 օր և ոչ աւելի 300 օր։ Ուրեմն  
միջին թուռվ 280 օր կամ 40 շաբաթ։ ծշտութեամբ  
ասել, արգեօք քանի շաբաթ, կամ քանի օր է ան-  
ցել, երբ կինը յդացել է, նոյնպէս երբ է լինելու  
ծննդաբերութիւնը—անկարելի է։ Այլ միայն մօտա-  
ւորապէս կարելի է ասել։ Ամենահմուտ բժիշկն ան-  
գամ կարող է 1—2 շաբաթով սխալուել։ Որովհետեւ  
ամեն մի յդի կնոջ համար չափազանց հետարրիբ է  
իմանալ երբ է նաև ադատուելու, սրափսզի վաղօրօք  
կարողանայ բոլոր ալատրաստութիւնները տեսնել,  
մենք այստեղ ցոյց կը տանիք միքանի նշաններ, ո-  
րոնց միջոցով նա կարող է մօտակերապէս որոշել  
ծննդաբերութեան ժամանակը։ Խթառաշի խթառու

Այդ նշաններն են.

1) Սաղմնառութեան ժամանակի բանաբանութեան  
2) Վերջի դաշտանի երեալը և առ առ բանաբանութեան  
3) Պտուղի առաջին չարժումները։ Դու պառ  
Եթէ յայտնի է սաղմնառութեան օրը, որ սա-  
կայն շատ հազուագիւտ է լինում, որովհետև սաղմ-  
նառութիւնը ոչնչով համարեաչէ արտայայտվում,  
այնժամանակ շատ հեշտ է որոշել ծննդաբերու-  
թեան մօտակերը։ Օր, եթէ սաղմնառութիւնը մար-  
տի 1-ին է պատահել, ծննդաբերութիւնը մօտառ-  
րապէս գեկտեմբերի սկզբն կը լինի, որովհետև  
յղութիւնը 9 ամիս է տեսում։ Աւելի հաւաստի է  
ծննդաբերութեան մօտենալը որոշել դաշտանի մի-  
ջոցով, մանաւանդ այն դէպում, երբ նա առաջ

կանոնաւոր է եղել։ Դրա համար հարկաւոր է գրել  
կամ միտք պահել այն օրը, երբ վերջին անգամ  
սկսուեց դաշտանը և քանի օր տեսեց։ Այդ օրից  
հարկաւոր է հաշուել 3 ամիս յետ և աւելացնել  
այնքան օր, որքան տեսել է դաշտանը։ Մտացուած  
ամիսն ու թիւը ցոյց կը տան մօտաւորապէս ծը-  
նընդաբերութեան ժամանակը։ Կասկածելի, անկանոն  
և նուազ դաշտանը չպէտք է հաշուի առնուի, թէ և  
նա յաճախ երեւում է և յղութեան առաջին ամիսնե-  
րում։ Բայց եթէ դաշտանը միշտ անկանոն է եղել  
յղութիւնից առաջ, կամ եթէ յդի կինը չի լիշում  
այն օրը, երբ վերջին անգամ սկսուեց դաշտանը,  
ծննդաբերութեան ժամանակը որոշելու միակ միջո-  
ցը սազմի առաջին թոյլ շարժումն է։ Այդ շարժում-  
ներն առնասարակ սկսվում են յղութեան 18—  
20-րդ շաբաթում, այնպէս որ հաշուելով բնական  
յղութեան ժամանակը 40 շաբաթ, կարելի է ասել,  
թէ ծննդաբերութիւնը, սկսած առաջին շարժումնե-  
րից, 20—22 շաբաթ յետոյ կը լինի։ Յայտնի քան  
է այդ երեք հաշիները աւելի ստոյգ են լինում այն  
ժամանակ, երբ դրանք միաժամանակ են տեղի ու-  
նենում, մանաւանդ վերջին երկուսը։ Վերջապէս կա-  
րելի է դիմել հմուտ բժշկի կամ մանկաբարձունու  
հետազոտութեանը։ Բայց նորից կը լինում ենք, որ  
բոլոր այդ որոշումները միմիայն մօտաւորապէս են։  
Այսպէս թէ այնպէս՝ 9 ամսոց յետոյ մօր արգան-  
դից դուրս է գալիս սազմը իր թաղանթներով և  
ընկերուի։ Այժմս անհրաժեշտ է միքանի պատ-

րաստութիւններ ես տեսնել, որոնք վերաբերում են  
ծննդաբերութեանը:

Ծննդկանի սենեակը ըստ կարելոյն պէտք է  
արձակ, բարձր և լոյս լինի. սենեակի տարութիւնը  
15°—16°-ից շահէտք է բարձր լինի. Այդ բոլորը ան-  
հրաժեշտ է ոչ միայն մօր, այլև սաղմի առողջութեան համար:

Հրաւիրուած մանկաբարձուհին, համոզուելով,  
որ ծննդաբերութիւնը մօտ է, ամենից առաջ պէտք  
է պատրաստէ այն ամենը, ինչ որ հարկաւոր է  
ծննդաբերութեան ժամանակ. տաք և սառը ջուր,  
շարսաւներ և սրբիչներ, մոմլաթ (կլեռեա)՝ ներք-  
նակը պաշտպանելու համար, ծննդկանի և նորածնի  
համար սպիտակեղին ևայլն:

Ցզութեան վերջին չորս շաբաթը արգանդը,  
որ մինչ այդ բարձր էր կանգնած, բաւականին իջ-  
նում է. կանանցից շատերի երեսի գծագրութիւնը  
նկատելի կերպով փոխվում է, այնպէս որ դրանով  
միայն կարելի է բաւականին ճիշտ գուշակել ծնըն-  
գարերութեան մօտենալը: Սրգանդի այդ տեսակ  
գիրքի բնական հետևանքն է կոնքի խորշում գտնը-  
ուող գործարանների, այն է՝ միզապարկի և վերջ-  
աղիքի ճնշումը: Ահա թէ ինչու այդ ժամանակ յոի  
կանայք առհասարակ շուտ-շուտ ու քիչ քանակու-  
թեամբ են միզում և փորկապութիւն են ունենում:  
Բայց այդ բոլորը ծննդաբերութեան միայն կանխա-  
գուշակներն են: Ամենամօտ նշանը, որի շնորհիւ  
կարելի է ասել, թէ ծննդաբերութիւնն սկսվում է —

Երկունքն է, այսինքն պարբերաբար կրկնուող ցաւը,  
որ առաջանում է արգանդի կծկումներից և ամեն  
անդամ տեսում է մօտ մի բովէ:

Երկունքի այդ պարբերականութիւնը ծննդա-  
բերութեան զանազան շրջաններում միատեսակ չի  
լինում: Սկզբում երկունքները թոյլ են և լինում են  
մօտաւորապէս ամեն մի 10 ր. յետոյ. բայց շուտով,  
սաղմի դուրս գալու ժամանակ, սկսվում են ար-  
գանդի աւելի սաստիկ կծկումները ամեն 2—3  
ր. յետոյ, որոնց ժամանակ լայնանում է նրա վի-  
զը (քերանը), Դա շարունակվում է 8—12 ժամ և  
աւելի: Վերջապէս, երեխայի ծնուելոց յետոյ եր-  
կունքը դադարում է և նորից 1/4—1/2 ժամից  
յետոյ սկսվում են մինչև ընկերքի և սաղմի թաղանթ-  
ների դուրս գալը (ծնուելը), որ տևում է 1/2—2  
ժամ: Սաղմի թաղանթները սաղմազրի հետ մտնուա  
են լայնացած արգանդավիզը, որտեղ թաղանթները  
տրաքիւմ են և սաղմազրի մի մասը գուրս է թափ-  
վում, որից յետոյ ծնվում է երեխան:

Այդժամանակ ծննդկանը գործ է գնում իր մը-  
կանների, գլխաւորապէս որովայնի և ստոծանի  
(ֆիաֆրագմա) մկանների բոլոր ոյժը նա սաստիկ  
յոգնում և բրտնում է: 1/2—2 ժամից յետոյ հետըզ-  
հետէ կծկուող արգանդից դուրս է գալիս ընկերքը  
թաղանթների և պորտի հետ: Դրանով վերջանում է  
ծննդաբերութիւնը: Թէև ծննդաբերութիւնը փիղիօ-  
լուգիական գործողութիւն է, բայց և այնպէս եր-  
բեմն նա կարող է վտանգաւոր լինել թէ մօր և թէ

երեխայի համար, այդ պատճառով՝ նպատակայարմար կը լինէր, եթէ ծննդաբերութեան ժամանակ ներկայ լինէր այդ գործին հմուտ անձնաւորութիւն։ Երբոր ծննդաբերութիւնը վերջանում է, հարկաւոր է երեխային աղասիել պորտից և ընկերից։ Դրա համար կտրում են պորտը։ Յայտնի պրօֆ. Ազիֆելդը խորհուրդ է տալիս այսպէս կտրել։ Պորտը պէտք է պինդ կապել երկու տեղից 8 սանտիմետր (3—4 մատ) հեռաւորութեամբ և նրանց մէջ տեղից կտրել։  $\frac{1}{2}$ —1 ժամ անցնելուց յետոյ հարկաւոր է մէկ անդամ ևս կապել որպէսզի արինահոսութեան առաջն առնուի։ Երկրորդ անդամ պորտը հարկաւոր է կապել  $1\frac{1}{2}$ , սանտիմետր (մէկ մատ) հեռաւորութեամբ և կտրել։ Խոկ կտրած ծայրը ալկօնօլով լուանալ և ապա խոնաւածուծ (բաճօռօռութեան) բամբակով կապել։ Սւելի լաւ է պորտը կտրել այնժամանակ, երբ երեխան սկսում է բարձը բղաւել։ Առհասարակ մինչ այդ  $1\frac{1}{2}$  րոպէ է անցնում։ Սպասել դրա համար զարկողութեան (պահապահ) դադարելուն, ինչպէս ասում են միքանիսը, բոլորովին միաք շոնի, որովհետև այդ դէպքում ստիպուած կը լինէինը երբեմն շատ երկար սպասել։

Պորտը կտրելուց յետոյ երեխային մէկ կողմէն դնում, որովհետև ծննդաբերութիւնից յետոյ  $\frac{1}{2}$  ժամաշափ մանկաբարձուհու կամ բժշկի բոլոր ուշադրութիւնը պէտք է դարձրած լինի դէպի ծննդկանը, որպէսզի իր ժամանակին նկատուի երեխացած

անիւրահոտթիւնը մանրա առաջն առնուի։ Դրանից յետոյ հարկաւոր է լուանալ ծննդկանի սեռական գործարանները կատարուած թողնելու վրաներու։ Հիմա նորից վերադառնանք պէտի նորածինը։

Երբ երեխայի պորտը կտրում են, հարկաւոր է այնուհետև նրան վաննա դնել և լողացնել։ Վաննայի ջրի տաքութիւնը պէտք է երեխայի մարմնի տաքութիւնից պակաս լինի, այն է՝  $27^{\circ}$ — $28^{\circ}$  Բէօմիւրի (33—35 Ցէլսի), և ոչ աւելի քան  $29^{\circ}$ ։ Սակայն նորածնի մարմնինը միայն տաք ջրով չի կարելի մաքրել. դրա համար երեխայի ամբողջ մարմնին քսում են պրովանսայի իւղ, վագելին, կամ մի ուրիշ տեսակ իւղ և ապա լուանում։ Եատ տեղերում սպիրութիւնն կայ առաջին անդամ ձուի դեղնուցով լուանալ երեխայի մարմնինը, որ նոյնպէս շատ լաւ է։ Երեսն ու աշքերը պէտք է լուանալ առանձին սպունդով կամ աւելի լաւ է թանձիփով (մարձա) բոլորովին մաքուր ջրով։

Առանձին ուշադրութեան արժանի են երեխայի աշքերը։ Զափից գուրս զգոյշ պէտք է լինել, որպէսզի վաննայի կեղտոտ ջուրը չլցուի երեխայի աշքերը, որովհետև այդ պէտքում կարող է աշքերի բոլորութեան առաջ զալ։

Աշքերի ցաւը առաջ է զալիս մօր սեռական գործարաններից զուրս թորող հեղանիւթի վարակումից, եթէ այդ հեղանիւթը սուսունակի հետեւանը է։ Հազարաւոր կոյրերի գոնէ մէկ հինգերոր-

գականը իրանց ծնողների անհզգութեան պղոներ  
են։ Գա աւելի և յաւալիմէ, ոյ երբ մարդ մտածում  
և հասկանում է, որ ակարելի է բախուսափն լորանից,  
եթէ ծնուելուց յետոյնուշաղը ու թիւն դարձնեն աշ-  
քերի վրայէ, ու նույնի զայր մասնեց պիտի  
ամս շնորհարոյ և յմք առաջ մայմ մուժում  
զննդան վայելում է զայր զննդի նոցառ վոչ վայմ  
Հոյ 82—72 է ուստի առթոք սիմելի նոցառ  
առ 82 մոյ միւս չու մ (Հոյ) 8 ՀՀ—ՀՀ վրայն  
այլ է յուզ զայր մասն զննդան վմնակո՞ւ մայր  
հայուն զրոյն վայելու զանու այր յացան միւզ  
ին նոյ, միւճրախ քայլ վասնանոյն և նույն միւ-  
ճրա առաջ մասնայ արտ և բայ խանու չմզրու  
յմք մոն նորու մնջուա յոյ և միւճրախու նոյ  
սիրուն չու զննդան վայելու յամայ խոյու  
ա յամայ է զայր զննդան ու մույշ ոչ այ առչ  
իսփհնման է այ պիւս նոյ խարւոյն մնջուա  
իրոջ զուռան մնջուարոց (ուշեւ)  
մասնեց մոն մասնայ մնջուա մնջուան  
ու իրոյ վայել է զայր բայր սովոր սիմաշ զննդան  
մնջուա վայելու վայրէ զոյու սովոր մասնան յո  
մնջուա և բայր նորու յոյ մույշի այ առաջինու  
այս զոյու մնջուա մնջուան մնջուա

զայրան սիրմի մնջուա յոյ է զննդան ըման  
ուն է աքատարո ուստ նորու յոյ յաս զովադիմ  
առանձան և առ նոյ, ուն վրանիքը դառ պատշառ  
մնան նոցառ նույնանու բանական մնան ուն  
մոց սաբար չու լուս նույնարին և զոյի յանքին  
մուն վրանիքը ուն ԹԱՌԻԽՎ մնանաւ ոյ և  
մաթի նույնանու մնան ուն մուն ուն մնան  
ուն ՃՆՆԴԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՅԱԶՈՐԴ ԵՐԱՆ զնն  
այսու յանքի այս մաս մնան և ուն ուն  
յորմ ուն ԺՆՆԴՂԱՆԻ առողջապահութիւնը և նոր  
զնն մնան այսու մաս նոյ ուն ուն ուն  
Մենք արդէն ասացինք, որ ծննդկանը նախ և  
տուազ կարեիք է զգում ֆիզիքական և հոգեկան հան-  
գատութեան։ Ծննդաբերութիւնից յետոյ նա շուտով  
քնում է, իսկ զարթելով առհասարակ քաղց է ըգ-  
գում։ Ծննդկանը պէտք է ստանայ զիրամարս և  
աննդարար կերակուր։ Սուազին օրերը նպատակա-  
յարմար է տալ Ճեմեւ արդանակներ սախտակ հացի  
հետ։ 4—5-րդ օրից յետոյ կարելի է տալ հաւի  
կամ հորթի մոխց պատրաստած արդանակ, մաս-  
ջուր և այլն։ 7-րդ օրից ծննդկանը կարող է հետզ-  
հետէ դառնալ դէպի իր սովորական կերակուրը։  
Խմելու համար կարելի է գործածել կաթ, կաթով  
սուրճ, երբեմն զուր, շատ տարածուած է նաև երի-  
ցուկի (րումանկա) և տելիայի (լիպովայ պենտե)  
թուրզը (հաստոյ)։  
5-րդ օրից ամենից օգտաւէտ է գործածել շա-  
քարաջուր նարինջի հիւթի հետ։ Ուժասպառ կա-

նանց հարկաւոր է հէնց առաջին օրերից մննդարար կերակուր տալ։ Այդ դէպքում շատ օգտաւէտ է մըսաջութը ձուի գեղնուցի հետ, հում ձու և կաթնային ձննդկանը պէտք է անկողնում մհայ ոչ պակաս քան 9 օր։ Հակառակ՝ դէպքում կարող են արգանդի անկանոն դասաւորութիւն և զանազան հիւանդութիւններ առաջ գալ։ Այդժամանակ արգանդը գեղես շատ մեծ և ծանր է լինում, իսկ նրա կազերը թուլացած, այնպէս որ շատ հեշտ կարող է նաև իր տեղը փոխել—ծռուել այս կամ այն կողմը։ Առաջին երեք օրը ծննդկանի համար ամենայարմար դրութիւնը—քամակի վրայ պառկելին է, Չորրորդ օրից նա կարող է զգուշութեամբ այս կամ այն կողը զառնալ, բող է զգուշութեամբ այս կամ այն կողը զառնալ, մինչև անդամ միրիչ բարձր պառկել։

Ծննդկանի սենեակի օդը պէտք է շուտ-շուտ մարդեկ։

Առաջին անդամ անկողնուց բաւական է 1 ժամ վեր կենալը։ Թողնելով անկողինը, ծննդկանը կարող է հիտոհիտէ թիթի զործեր անեւ, բայց սովորական աշխատանքներին կարելի է վերադառնալ միմիտին 6 շարաթից յիտոյ։

Ընկերքը զուրութակուց յիտոյ արդանդում մէր-ըինման բան է գոյանում, որից ծննդաբերութեան առաջին օրերը դուրս է թորում (արինն և արիննատան հեղուկ։ Այդ վերքը միքանի շաբաթից յիշխառն հեղուկ։ Այդ դուրս է արիննի արիննատան լաւանում է, առել արիննատանութիւնն ընդհատառում։ Սակայն դրա իրոխարէն սկսվում է լորձանիւմ։

թի հոսումն, որ բաւական երկար է տնում։ Եթէ մայրը ինքն է կերակրում երեխային, այդ դէպքում լորձանիւթի հոսումն առհասարակ 3—4 շաբաթի տևում, եթէ ոչ—աւելի շատ։

Մինչև լորձանիւթի անհետանալը պէտք է ամենայն ուշադրութեամբ լուանալ արտաքին սեռական գործարանները։ Ծննդաբերս թեան ժամանակ երբեմն պատովում է շէքը, որ իսկոյն պէտք է կարել տալ բժշկին՝ խուսափելու համար անախորժ հետևանքներից։

Ծննդկանին ամենից առաջ հանգստութիւն է հարկաւոր։ Նա պէտք է խոյս տայ այն ամենից, լինչ որ կարող է բարկացնել, վշտացնել իրան։

Մինչդեռ ծննդաբերութիւնից յիտոյ կեզ սեռական գործարանները հետզհետէ իրանց առաջուայ ձևն են ընդունում, ծծերը ընդհակառակը շուտով սկսում են աւելի լցուել և կաթ տալ։ Ծննդաբերութիւնից յիտոյ դեռևս միքանի օր ծծերից դուրս է գալիս պինդ գեղնագոյն դալ, նորածնի համար այդ շատ օգտաւէտ է, որովհիտե նա լուծողութիւն է առաջանում և այդպիսով մաքրում նրա աղիքները։ Շատ տեղերում դեռևս նախապաշարմունք կայ, թէ ծընդնդկանը չպէտք է տանից դուրս գայ Յ շաբաթի շափ։ Ամառը տաք և լաւ եղանակի չնորհիւ կարելի է և երեք շաբաթից յիտոյ դուրս գալ։ Բայց տարուայ միւս շրջաններում, երբ եղանակը փոփոխական է լինում, աւելի լաւ է հետեւ ընդունուած սովորութեան, ոլ պէսզի ծննդկանը ազատ մնայ

մրսելուց, ապա և հիւանդանալուց, Առհասարակ կինը ծննդաբերութեան յաջորդ շրջանում աւելի է տրամադրուած դէպի հիւանդութիւնները։ Մանաւանդ հեշտ են ենթարկվում հիւանդութեան՝ ձուարանները, ընդերապատն ու ծծերը։ Այդ պատճառով ծընդգկանը այդ շրջանում պէտք է առանձին ուշադրութիւն դարձնէ իր վրայ։ որովհետև նրա թեթևամիտ վերաբերմունքը, մանաւանդ անկողնուց վաղ վեր կենալն ու մրսելը, կարող է շատ վնասակար լինել նրա համար։

Կերակրող մայր։ Եթէ մայրը լինին է ծիծ տալիս երեխային, նա պէտք է ամենից առաջ միտք պահէ, որ իր գլխաւոր հոգսը—երեխան պիտի լինի։

Շատ բաներում նա պէտք է իրան գրկէ։ Միծ նշանակութիւն ունի մօր հոգեկան տրամադրութիւնը, որից որոշ չափով կախուած է կաթի քանակութիւնն ու նրա յատկութիւնը։ Ծծի և լրկայի առաջութիւնը համարեա կախուած է մօր կաթի յատկութիւնից։ Ծիծ տուող մայրը այնժամանակ միայն կ'ունենայ լաւ կաթ, երբ նա չի ծանրաբեռնիլ իր սմատմոքսը ծանր, դժուարամարս կերակուրները սմատմոքսը ծանր, զարդուած կաթի լինի ուտելում և խմելում։ բացի գրանից երբ նա չի տիրի անգութութեան մէջ, այլ կ'աշխատի, յաճախ կ'օգտուի մաքուր օղից, գգուշանալով մինոյն ժամանակ վատ եղանակից, վերջապէս, երբ նա կը կարգաւորէ քնելու և արթուն մնալու ժամանակը։ Ահա այն պայման-

ները, որոնց շնորհիւ առողջ կնոջ կաթը այն յատկութիւնները կ'ունենայ, որոնք անհրաժեշտ են երեխայի կանոնաւոր սնուցման և զարգացման համար։ Մօր և երեխայի առողջութեան համար անհրաժեշտ է հանգստութիւն, գոհունակութիւն և ուրախ տրամադրութիւն։ Մօր կը բերը և հոգեկան գրգռումները չափից դուրս վնասակար են երեխայի համար։ Նեարդային համակարգութեան աղդեցութիւնը կաթի քանակութեան և յատկութեան վրայ—անտարակոյս է։ Կնոջ լաւ տրամադրութեան ժամանակ թէ կաթի քանակութիւնն է շատ լինում և թէ յատկութիւնը բարձր։

Աւելորդ չենք համարում նոյնպէս միրանի խօսք ասել այն վոլովսութիւնների մասին, որոնց ենթարկում է կաթը զանազան գեղերի աղդեցութեան տակ։ Դիտողութիւնները ցոյց են տալիս, որ մօր ընդունած դեղերը ներգործում են և երեխայի վրայ։ Օրին, եթէ մայրը լուծողական է ընդունում, նրա երեխան էլ սկսում է լուծել։ Մօր կաթի մէջ կարելի գտնել այս կամ այն դեղի հետքերը։ Այդ պատճառուի ծիծ տուող մայրը ըստ կարելոյն չափ պէտք է խուսափէ զանազան դեղեր կամ դեղերի յատկաւթիւն ունեցող կերակուրներ գործածելուց։

ՆՈՐԱՖԻՆ ԵՐԵԽՆԱՅԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Երբոր երեխան ծնուեց, նրան, ինչպէս վերև ասացինք, հարկաւոր է իսկոյն լողացնել  $27^{\circ}$ — $28^{\circ}$

գաննայի մէջ։ Առաջին պնդամ երեխային լողացնում  
են սովորականից աւելի երկար, իսկ յետոյ նշ պէե  
լի, քան 5—10 րոպէ։ Ամեն մի վանայից յեպոյ  
կարիք չկայ իսկոյն փաթաթել երեխային։ Աւելի  
լաւ է ծածկել նրան տաք շոբերով և միքանի րոպէ  
թողնել նրան, որ նա ազատ շարժէ ձեռներն ու  
ոտները։ Առաջին երկու շաբաթը երեխային հար-  
կաւոր է օրը երկու անգամ լողացնել։ յետոյ մինչև  
6-րդ շաբաթը կարելի է օրը մէկ անգամ, մինչև  
5—6 ամսական հասակը շաբաթը՝ 2—3 անգամ։  
Աւելին կարող է վնասակար լինել, որովհետեւ երե-  
խաները դրանից քրտնախաշ են լինում։ Առանձին  
ուշադրութեան արժանի է գլխի կաշու մաքրութիւ-  
նը։ Եթէ երեխայի գլուխը սապոնով չլուացուի յա-  
ճախ, նրա վրայ թեփաւոր ցիխազոյն փառ կը դոյ-  
անայ։ Այդ փառը մազերի ազատ աճելուն և կաշու  
գոլորշեցման արդենք է հանդիսանում, որից վերջ-  
իվերջոյ գլխի վնասարել ցան (ըստ) է առաջա-  
նում։ Այդ պատճառով պէտք է աշխատել որքան  
կարելի է չուտ մաքրել այդ փառը։ Դրա համար  
հարկաւոր է լուանալուց առաջ երեխայի գլխին սլրո-  
վանսայի իւղ, գլխիցերին, կարագ կամ ձուի դեղնուց  
քսել, քսած տեղը քաթանի կտորներով։ ծածկել և  
ալա մէկ ժամից յետոյ օճառով լուանալ։

Այժմս տեսնենք՝ ինչպիսի հազութը աւելի նը-  
պատակայարմար է երեխայի համար։

Հապուատի դլխաւոր նպատակը՝ ցրտից սլաշտ-  
պանելն է։ Մինչդեռ լինութեան օրէնքներն ու ա-

ողջ բանականութիւնը թելազրում կնմեղ, որ ե-  
րեխայի բոլոր անդամների շարժողութեանը պէտք  
է լիակատար ազատութիւն տալ շատ մայրել զա-  
նազան փաթթոցներով զրկում են երեխային ա-  
զատ շարժումներից։ Երկար ժամանակ պմեն տեղ  
տարածուած էր այդ վնասակար սովորութիւնը, ո-  
րի չնորհիւ երեխային պինդ բարուզնում էին փաթ-  
թոցներով, այնպէս որ նա չէր կարողանում շարժել  
իր ոչ մի անդամը։ Ինչպատճեն դիմութարզար մարա-  
ժարերազդարար այդ բարբարոսական սովորու-  
թիւնը վերջին ժամանակներս բոլորովին մօռացու-  
թեան է տրուած։ Բայց, աւազ, այդ վերաբերում է  
միմիայն արկմտեան։ Եւրոպային, իսկ մեղ մօտ և  
ամբողջ Ծուսաստանում այդ սովորութիւնը գեռիս  
իր բոլոր ոյժն ունի։ Այժմս բոլորը համոզուել են,  
թէ նրան վնասակար է այդ սովորութիւնը։ Ար-  
դեօք ժամանակ չէ, որ մեր մայրեն էլ թողնեն  
այդ հին սովորութիւնը։ Այժմը բարձր կայուն է այդ վերջին միայն արտաքին տեսքը բաւական է,  
որ հասկանանք, թէ ինչպիսի բաւականութիւնն է  
պատճառում նրան այդ ազատութիւնը և այնչափ օպտաւէտ է այդ նրա համար։ Մինչև անդամ քնած  
ժամանակ չպէտք է զրկել երեխային այդ ազատու-  
թիւնից։ Նրա աճման և զարգացման համար ամի՞-  
րաժեշտ է անդամների շարժողութեան լիակատար  
ազատութիւնը։ Ծծի երեխայի գլխիսը՝ տաք ժամա-  
նակ են սեննակում ոչնչով հարկաւոր չէ ծածկել։  
ամի առաջ պարագան դու ցցեցով վայսից ամ նաև

Չմեռը կարելի է ծածկել գործած չամշկով, որից կաշու գոլորշին աղատ կարող է դուրս դալ: Երկար տարիների վորձը ցոյց է տալիս, որ երբէք չպէտք է երեխային սովորեցնել չափից դուրս վաղ նստել. Խոկ երբ նա ինքը աշխատում է բարձրացնել զլուխը, ապա և մարմնը, միշտք է օդնել նրան: Բոլոր նրա դրութիւններն (ոօզն) ու շարժումները պէտք է յարմարուեն նրա մկանների բը-նական դարպացմանը: Երեխաներին վաղ նստել սովորեցնելու հետեանքը յաճախ լինում է նրանց վը-զի և մարմնի (մէջքի) ծռուելը: Աւելի ևս վնասակար է երեխաներին ժամանակից առաջ ոտքի կանգնեցնելն ու ման դալ սովորեցնելը: Երեխային չպէտք է ոտքի կանգնեցնել, մինչև որ նա ինքը չարտայայտէ այդ պահանջը, այսինքն մինչև նա չղդայ իր մէջ բաւական ոյժ: Այդ՝ առհասարակ 9, 10, 11 ամսական հասակումն է լինում: Խոկ եթէ երեխային բռնի են ոտքի կանգնեցնում և ստիպում ման դալ, դրա հետեւանքը լինում է ոտքերի և ողնաշարի ծռուելը:

Եատ վնասակար է նոյնպէս քառակուսի վանդակիների, շարժուն կրղովների և նստարանների վաղ գործածութիւնը: Մեքենայական այդ յարմարեցումները առհասարակ բռլորովին ապարդիւն, մինչև անգամ վնասակար են, որովհետեւ չնորհիւ նրանց, երեխաները չեն կարողնում կարգաւորել մարմնի հաւասարակշռութիւնը: Բացի դրանից՝ նրանք սեղմում են երեխայի կուրծքը, որ նոյնպէս շատ վնա-

սակար է: Ամեն անդամ՝ երբ երեխան լաց է լի-նում, չպէտք է աշխատել իմկոյն գրկել և ճօճել, որպէսդինա հանգստանայ: Եատ մայրեր չեն ու-գում հանկանալ, որ երեխայի լացը նրա բնական, խօսակցական լիզում է: Երբ ծնվում է երեխան, նա լաց է լինում: Այդ առաջին լացով կարծես նա ի-մաց է տալիս շրջապատողներին, որ ինքը ևս այժ-մեանից ապրելու իրաւունք ունիւն լացով նա ար-տայայտում է իր բոլոր կարիքները, երբեմն նա լա-լիս է մարմնամարզութեան համար: Մի խօսքով՝ լացով նա արտայայտում է բոլոր իր զգացմունքնե-րը: Այդ պատճառով լացը ունի իր յատկանիշները: Երբ երեխան քաղցած է, նա այլ կերպ է լալիս, քան այնժամանակ, երբ նա կեդտոտ կամ թաց բա-րուրանիքների մէջ է պառկած, այլ կերպ՝ երբ նա ո-րեւ ցաւ է գոռում, կամ հիւանդ է: Ամեն մի մայր պէտք է ուշագրաւթեամբ ուսումնասիրէ իր երեխայի լացի յատկանիշները: Ի հարկէ, երբեմն մայրերը կա-րող են և սխալուել: Այդ պատճառով, եթէ երե-խան անընդհատ լաց է լինում, այսպէս որ մայրը ոչ մի կերպ չէ կարգանում հանգստացնել նրան, այնժամանակ հարկաւոր է ուշագրի կերպով ըննել ե-րեխային, այսինքն հանել նրա շորերը և հետազո-տել մարմնի բոլոր մասերը: Դրա անհրաժեշտու-թիւնը ցոյց տալու համար, մենք հետեւալ օրինա-կը կը բերենք:

Մի երեխայ լալիս է եղել ամբողջ գիշերներ ու ցերեկներ, եղբ նրանի աջ կողքի վրայ էին դնում.

բանից դուրս է եկել, որ նրա կաշու տակը պնդա-  
սեղ է խրութած եղել, Եւ իրաւ, միթէ երեխային ա-  
մեն մի լացը ցաւի կամ քաղցի արտայայտութիւն  
է: Պէտք է ամենից առաջ քննել, թէ ինչն է նրա  
լացի պատճառը. դուցէ նեղ, սեղմող է չորը, բա-  
րուրանը կեղտուղել են և կամ մի որկէ ուրիշ  
սլատճառ կայ:

Մշտական ճօճելը փշացնում է երեխային և  
ֆիզիքապէս և բարոյապէս, որովհետև սաստիկ շար-  
ժումնելը առաջնում են բնականից աւելի սաս-  
տիկ չնշառութիւն, տրամադրում են երեխային դէ-  
պի ցրտահարութիւն (մրսողութիւն) և հետեաբար  
սովորեցնում են նրան քմահաճ լինել, Այդ տարած-  
ուած մնասակար սովորութիւնից խոյս տալու հա-  
մար, հարկաւոր է երեխային հնչնց առաջին օրերից  
սովորեցնել, որ նա քնի առանց ճօճելու—օրօրելու,  
և գրկած ման ածելու, որ բաւական անհանդսու-  
թիւն է պատճառում մօրլ, Եթէ երեխան առողջ է,  
ոչ մի բան չի ճնշում նրան, բայց և այնպէս լաց է  
լինում, այդ լացը ոչ այլ ինչ է, եթէ ոչ բնական  
կարիք, որ միայն նրա ոյժի արտայայտութիւնն է:  
Այդ դէպրում պէտք է թողնել երեխային որ իր համար  
լայ և ոչ թէ հանգստացնել զանազան միջոցներով.  
Նա ինը ըուտով կը հանգստանայ և կը քնի: Այն  
երեխաները, որոնք սովորել են միշտ գրկում նստել,  
անստանելի են դառնում մանաւանդ հիւանդ ժամա-  
նակ, Ետև կարեոր հարց է նաև այն, թէ երբ կարելի  
է երեխային դուրս բերել թարմ օդ ծծելու համար:

Այդ կախուած է ամենից առաջ տարուայ ժամանա-  
կից և նղանակից: Եթէ երեխան ծնվում է տար-  
ուայ տաք ժամանակում, նրան կարելի է լաւ նղա-  
նակին դուրս բերել մննդաբերութիւնից 10—12 օր  
յետոյ, պղուշանալսով միայն խոնաւութիւնից և ցըր-  
տից: Բացի գրանից ման ածելը չպէտք է 1 ժամից  
աւելի տեէ: Մեծ զգուշութիւնն է պահանջում առա-  
ջին անգամ երեխային ձմեռը և աշունքը ման ածե-  
լը: Տարուայ այդ շրջաններում կարելի դուրս բերել  
երկու ամսականից ոչ պակաս երեխաներին, այն էլ  
օրուայ ամենատաք ժամանակը, որպէսզի շմբսեն նը-  
րանը: Երբէք չպէտք է ծայրայեղութիւնների դիմել,  
ինչպէս անում են շատերը:

Օրականայրերից միքանիսը շատ սակաւ են զուրս  
բերում երեխաներին, միւսները լնդհակտուակը՝ շատ  
յաճախ: Առաջինները շավից դուրս վախենում են  
մրսեցնել նրանց, իսկ միւսները դրա ընդհակառակ՝  
ուզում են սովորեցնել ցրտի, մասանալով, որ այդ  
բանին կարելի է համեստ միմիայն հետեղաբար և  
ոչ թէ միանդամից: Չպէտք է մոռանալ, որ երեխան  
ցրտի չի դիմանում, մինչև անգամ մէկ տարեկան  
հասակում նրան կարելի է դուրս բերել այնժամա-  
նակ, երբ—2° (Բ.) պակաս չէ, այն էլ միայն 1/2  
ժամով և երբ քամի չկայ: 3—6 տ. երեխաներին  
չի կարելի դուրս թողնել, եթէ—5° (Բ.) ցածը է:  
Զանազան տեսակ օրօրոցներ գործածելը պէտք է,  
որքան կարելի է, սահմանափակել, որովհետև թէ  
ուժեղ, թէ արագ օրօրելը միանդամայն մնասակար

է. դրա հետեանքը կարող է լինել ուղեղի ցնցում,  
գլխավոյտ, սրտի խառնուելը ևայլն թէն, ճիշտ  
է, թեթև օրօրելը այդ տեսակ հետեանքներ չի ա-  
ռաջացնում, բայց և այնպէս աւելի լաւ է, ինչպէս  
ասացինք, ըստ կարելոյն չափ, սահմանափակել օ-  
րօրոցների գործածութիւնը երեխան, որի շար-  
ժումները չեն ճնշուած, որին բաւական ժարմ ու  
են տալիս ծծելու, որին, վերջապէս, կերակրում են  
պահեցողութեան կանոնների համաձայն, ոչ մի ժա-  
մանակ կարիք չի գտայ աբուեստական միջոցների  
հանգստացման, նա առանց օրօրուելու էլ կը քնի  
իր ժամանակին:

Տեսնենք այժմս, թէ նրգան է հարկաւոր քնել ե-  
րեխային: Մինչ այժմս էլ շատ տեղեր տարածուած  
է այն կարծիքը, որ եթէ երեխան շատ քնի, նա  
կը յիմարանայ: Բնութիւնը ինքը մեզ ցոյց է ա-  
լիս, թէ որքան է քնելու երեխան: Սուազին 4—6  
շաբաթները երեխան առհասարակ օրուայ մեծ ժա-  
նը քնում է: Երկարատե քունը բնական կարիք է  
և անհրաժեշտ է երեխայի ոյժեւի դարգացման հա-  
մար: Այնպէս որ՝ խանգարել այդ քունը թէ վասն-  
գաւոր է և թէ անմիտ: Քանի մեծանում է երեխան,  
այնքան ես զարգանում է երա ուղեղն ու միւս ան-  
դամները դրանց հետ միարին զարգանում է նաև  
արթուն մեալու կարիքը, ուստի երեխան աւելի  
քիչ է քնում: Միայն մէկ բան պէտք է աչքի ա-  
ռաջ ունենալ: Երբէք չստիւել երեխային քնել: Եթէ-

երեխան առողջ է, բնութիւնը ինքը ցոյց կը տայ-  
քնելու և արթուն մեալու կարիքը:

Զափից դուրս կարեոր է երեխային վաղ հա-  
սակից սովորեցնել մաքրութեան: Այդ նպատակով  
նրան՝ քնելուց և զարթելուց առաջ, նոյնպէս մի-  
քանի անգամ օրուան ընթացքում, հարկաւոր է թա-  
սի վրայ նստացնել: Այդպիսով 4—5 ամսական ե-  
րեխանների ֆիզիօգիական այդ կարիքներն անգամ  
որոշ չափով կարելի է կարգաւորել: Այդ շատ կա-  
րեւոր է, որովհետեւ սպիտակելինի մշտական կեղտու-  
ուելը, եթէ մինչև անգամ փոխում էլ են, ամիանում  
է երեխայի պողոզութեանը ցրւուն այսունա-  
ցածք այս լայի վրայից զայն երազաւորաց: Հ-  
ութագայիսապէ Յ երեխաը նրոգմենալու միջառա-  
գրեառան մատինին ցրւուն վրայից: Եղնից մատել  
ու մայստերը դումուրութայ լա: Եզ ըստ իս-  
լա մուհիւնից—ցմահի այսինու միւս մուհիւթանա-  
ց ցմահիւսուիու նոյնմենալու միջառան վզման  
ասցիս իրուանար բա: Երբեմն յանահաց վզման  
ամ մաքարունի չմն վրայուն ցմահիւթարութայ  
ու մ մաքարունի բազա վրայից վմու մահիւսու-  
ցաւուն մակարութայ մաքարութայ մաքար-

տամ ցթ ցուք ցոմ ցածին ունեցած ։ Ե օրուառ մասկ մասկ  
աշ բար միջայի մասկ մատին մատին և այսին  
խթառապա՞ բա՛ մասկ մատին յմբարդակ ուժան  
ին սիրակո՞ զա գլուխուն արդարութ նորու իմաց  
**ԳԼՈՒԽՈՎԻ** և ցուքին մասկ  
ան և զարդար արդարութ մատին նորու իմաց  
և մատին ։ Ե խուճառ մատին բայի փա  
նորու մատին արդարութ մատին իմաց չաղ  
այ այ ։ Ե արդարութ մատին իմաց չաղ

**Ամենից լաւն այն է,** որ մայրը ինքը ծիծ տայ  
իր երեխային. այդ այժմս յայտնի է ամեն մի կնոջ:  
Ամենալաւ մնունդը երեխայի համար իր մօր կաթն  
է։ Հոգատարութիւնը երեխայի վրայ՝ նրա կեանքի  
առաջին շաբաթներում կազմում է դաստիարակու-  
թեան հիմքը։ Երեխայի մնունդը միմիայն ստամոք-  
սի հարց չէ, այլ չափազանց կարեոր կրթական նը-  
շանակութիւն ունի։ Սովորութիւնը—կրթութիւն է.  
Կեանքի առաջին շաբաթներում սովորութիւնը չի  
կարելի բաժանել մնունդից։ Սյդ պատճառով խիստ  
կարգապահութիւնը մնունդի մէջ վճռողական նշա-  
նակութիւն ունի երեխայի յաջող ֆիզիքական և հո-  
գեկան զարգացման համար։

Եթէ երեխան առողջ է, իսկ մօր կաթը բա-  
ւական, միքանի օրուայ կամ ամենաշատը՝ միքանի  
շաբաթուայ մէջ կարելի է երեխային սովորեցնել  
այնպէս, որ նա բաւականանայ ընդամենը 4—6 ան-  
գամ ծիծ ուտելով 24 ժամուան ընթացքում, իսկ  
մնացած ժամանակը կամ անընդհատ ընի, կամ հան-

գիստ պառկէ, որպէսզի չխանգարէ մօր անդորրու-  
թիւնը։

Սյդ կրթական հետևանքին համելու գլխաւոր  
ոլայմանը հետևեալն է.

Երբէք չպէտք է խանգարել երեխայի հանգը-  
տութիւնը, կամ վերցնել նրան մահակալից, բա-  
ցի այնպէտքերից, երբ հարկաւոր է նրան լո-  
ղացնել, փոխել բարուրանքները կամ ծիծ տալ։ Ե-  
թէ այդ տեսակ կարդ պահպանուի և երեխային լո-  
ղացնելու բարուրանքների փոխելը ծիծ տալուց  
միշտ առաջ լինեն, այնժամանակ առաջին 5—6  
ամիսը կարելի կը լինի 24 ժամուան ընթացքում  
նրան ոչ աւելի քան 4—6 անգամ մահակալից  
բարձրացնել և ամեն անգամ հոգատարութիւնը նրա  
վրայ մօրից կը պահանջէ ոչ աւելի քան  $\frac{1}{2}$ — $\frac{3}{4}$  ժամ։  
Սյդպիսով մայրը ցերեկը և գիշերը զբաղուած  
կը լինի երեխայով ընդամենը 2—4 ժամ։ Սուաջին  
անգամ մայրը կարող է ծիծ տալ երեխային միայն  
ծննդաբերութիւնից 12 ժամ անցած, երբ նա բա-  
ւականին հանգստացած է զգում իրան։ Օրուան ըն-  
թացքում հարկաւոր է ծիծ տալ երեխային ամեն  
անգամ 3 ժամ անցած, իսկ զիշերը թողնել նրան  
քնելու, որպան և լինի, Կերակրելու համար ճշտու-  
թեամբ որոշում են և հետևում այդ որոշած ժամե-  
րին, մինչեւ անգամ զարթեցնում են երեխային այդ  
նպատակով. ընդհակալաւելը զիշերը, եթէ երեխան  
սաստիկ լաց էլ լինի, թողնում են նրան լաց լի-  
նի, մինչեւ որ կը փոխման նրա բարուրանքները,

յետոյ միայն ծիծ են տալիս։ Սյդպիսով կարելի է  
լինում այնպէս սովորեցնել, որ երեխան ցերեկով  
որոշ ժամերին է ուղղում ծիծ ուտել, իսկ գիշերը  
աւելի և աւելի երկար է քնում ու վերջութեղջոյ ամ-  
բողջ դիշերը քնում է։ Ճիշտ է, երեխային այդ տե-  
սակ սովորեցնելը դժուար է, բայց երբ մայրը որոշ  
ջանք է դործ դնում, համնում է այդ նպատակին։

Սյդ տեսակ դաստիարակութեան զեղեցիկ հե-  
տևանքները այնքան պարզ, այնքան դրավիչ են, որ  
դժուար թէ շատ թէ քիչ խելացի կինը հրաժարուի  
դրանից։ Երեխային անկանոն կերակրելը վտանգա-  
ռոր կարող է լինել թէ մօր և թէ երեխայի համար։  
Որպէսզի կաթը իր բնական յատկութիւնն ունենայ,  
հարկաւոր է որ նա որոշ ժամանակ ծծերում մնայ.  
իսկ երբ մայրը յաճախ ծիծ է տալիս, կաթը զըրկ-  
վում է իր բնական յատկութիւններից։ Դրա հետե-  
ւանքը լինում է երեխայի մարսողական գործարան-  
ների խանգարումն։ Երեխան սկսում է լուծել, ործ-  
կալ հային, նա անհանդիստ է, շարունակ լաց է լի-  
նում։ իսկ մայրը, կարծելով թէ երեխան բաղցած  
է կամ ծարաւ, նորից ու նորից ծիծ է տալիս նը-  
րան։ Նա էլ սկսում է ծծել, բայց շուտով նրա ան-  
հանդստութիւնն ու ձայնը նորոգվում են, որովհե-  
տեւ նա բոլորովին քաղցած կամ ծարաւ չէր։

Մայրերից շատերը մոռանում են, որ երեխայի  
լացը նրա խօսակցութենոն է, և որ այդ լացով  
նա արտայայտում է առհասարակ բոլոր իր զլաց-  
մունքները և ոչ թէ միայն քաղցը։ Մանաւանդ օդ-

տաւէտ է կերակրելու ժամերը կարգաւորելը, եթէ  
աչքի առաջ ունանանք մօր դիշերուայ բունը, որ  
պինքան անհրաժեշտ է նրան։ Դրա համար ամենից  
լաւը երեկոյեան ժամը 10—11-ին երեխային կուշտ  
կերակրենէ, որպէսզի նա հանդիստ մնայ մինչև  
առաւօտ։

Սյդմ տեսնենք, թէ ինչպէս պէտք է հասկա-  
նալ, որ երեխան կուշտ է, եթէ մօր կաթը բաւա-  
կոն շատ է, երեխան կշտանում է մօտաւորապէս  
10 լորովէում։ Նոյնիսկ առաջի օրերը միայն կշռելով  
կարելի է որոշել, թէ որքան կաթ է ծծել երեխան,  
բայց և շուտով կարելի է երեխայի վրայ նկատել  
նոյնպէս կշտանալու նշանները։ Նա այլիս լաց չի  
լինում, երբ նընն հեռացնում են ծծից, կամ նա  
ինքը թողնում է ծծը, չի շարժում ոտներն ու  
ձեռները, չի ծծում իր մեծ մատը, մի խօսքով նա  
կուշտ երեխայի տալաւորութիւնն է թողնում։ Ըստ-  
հակառակը՝ լինում են դէպքեր, երբ մօր կաթը բա-  
ւական չի լինում երեխայի համար։ Սյդ գէպըում  
անհրաժեշտ է միևնուրից բան ևս տալ կովի կամ  
այծի կաթ, նէստլէի ալիւր եալին։

Ծիծ տալու ժամանակ յաճախ վրայ են հաս-  
նում այնպիսի երեխայթներ, որոնք ստիպամ են ժա-  
մանակից առաջ երեխային ծծից կտրել։ Սյդպիսի  
երեսյթներն են դաշտանի վաղ երեսալլ, յղութիւնը,  
կաթի անհետանալը։ Սյդպիսի գէպքերում բժշկի  
խորհրդով պէտք է լրջօրէն մտածել, թէ ինչ մի՛  
զցնիրի զիմել՝ ծծմօր, արուեստական սնուցման,



նաշափ փոխվում է: Ծծի երեխայի համար շատ կարևոր է, եթէ ծծմայրը մօր հասակալից է և միատեսակ կաղմուածք ունեն: Անհրաժեշտ է որ ծծմայրը ոչ աւելի քան 6—8 շաբաթ առաջ տղայ բերած լինի, որովհետեւ եթէ միքանի ամիս անցած լինի, նրա կաթը կարող է նորածին մանկան ստամորսի խանգարումներ առաջացնել: Թոյլ երեխաների համար աւելի լաւ է այնպիսի ծծմայր վարձել, որ միքանի անգամ զաւակ է ունեցել, որովհետեւ մէկ կողմից այդպիսի մօր կաթը աւելի հնչա է դուրս գալիս, միսա կողմից՝ այդպիսիք ամեն կողմանու վարձորդուածքն լինում, զիտեն թէ ինչ բան օգտաւէտ կամ վնասակար է թրանց, աւելի համբերող են եայն: անհաղջան զուն միայն միայն  
Եթր ծծմայր են լինուրում-պրծնում, ամենից առաջ պէտք է աշխատել չփոխել նրա կենցաղակարութիւնը. եթէ նա առաջ աշխատում էր, պէտք է այժմս սէլ աշխատեցնել նրան, որովհետեւ անգործ մնալը վնասակար է թէ նրա առողջութեանը: թէ կաթի յատկութեանը: Մանաւանդ առանձին ուշադրութիւն պէտք է զարձնել նրա ուտելիքի և խմելիքի վրայ: Զուրը, կաթը, կաթով թէյն ու սուրճը — ամենալաւ խմիչքներն են ծծմօր համար: ինչ վերաբերում է ուտելիքին, պէտք է միշտ աշքի առաջ ունենալ, որ ծծմայրը երկուսի տեղ պէտք է ուտէ: այդ պատճառով հարկաւարէ նրան տալ շատ և մի մնոյն ժամանակ սննդարար կերակուրներ: բայց առաջաւագ դմտ ելուրարադ դնայ ըմողմ սուսնացու

— նյշ եթէ բնողները նկատեն, որ երեխան հետկներէ նիհարում է, անհանգիստ է, վատ է ընուած կամ քակրը կանաչ գոյնուամնիւ վերջապէս մթէնա լաց է վինուման հիւանդի է, այնհրաժեշտ է բժիշկ հրապիր պել, ողականի նաև հետազօտէ ծծմօրը կանգակաթմ: Եթէ բժիշկը գտաւ, որ կաթը վատ բնամն բաւարար, խկոյն հարկաւոր է հեռացնել ծծմօրը: Այդպիսի գէպքում այլ կերպ վարուելը ոճրագործութիւն է երեխայի վերաբերմամբ: Ծծմօր փոխելը նշ մի վտանգաւոր հետևանք չունի, մանաւանդ եթէ վատ ծծմօր տեղ լաւը պատահի: Հնց առաջին օրերը մայրը պէտք է լուս ուշադրութիւն գարձնէ, թէ իր երեխան ինչպէս է ծիծ ուտում և օգտակար է արգեօր ծծմօր կաթը: Այդ բանը հասկանալու համար անհրաժեշտ է երեխային կշռել: Եթէ երեխայի քաշը հետզհետէ աւելանում է, ստամորսը կանոնաւոր է, զունը հանգիստ, շատ չի լաց լինում, ուրախ և զուարթ է, գլխի և առհասարակ մարմնի վրայ չի երեսում ցան, այնժամանակ ծըծմօր կաթի օգտաւէտ լինեն անկասկած է: Հակառակ պակ գէպքում ծծմօր կաթը վնասակար է և հարկաւոր է հեռացնել նրան:

Բայց ահա ծծմայրը գտնուած է. նա բոլոր պահանջներին բաւարարութիւն է տալիս: Այժմս երեխայի մայրն էլ պէտք է իր վրայ որոշ պարտականութիւններ վերցնէ ծծմօր վերաբերմամբ: Մանաւանդ առաջին օրերը հարկաւոր է, որքան կա-

թելիք, փափուկ և քաղցր վերաբերուել (դէպի) ծրծ-  
մայրը: ունց և ուսի և ուսդրսն և և և և և անուղածի ամ  
բայ սօր մարդասէր վերաբերմունքը այդ դէպքում  
կարող է միայն օգուտ բերել. իսկ ընդհակառակը՝  
չափաղանց խստութիւնն ուս վատա վերաբերմունքը  
անսպայման կը վնասեն գործին քայլած այն  
պահանջ վաճառած է զարման մշտակ պարտադ  
-անձաւուն պարագայ բարձր լայ նազուք վայարչ  
պարագի ունեց պահանջմանի պայման է մայիս  
չեմ բանասան մանուշ զամանե պարագանի վե չն  
մանաւ բայ վայ անտար գալ բայ ունեց պահ  
և մասար մայիսի առ և գայլու զպան զզազ  
աւար և նասար նիս և աքրամի մասմիս զի նի  
ապատէ զման բայ վայ պահ ունեց զուրկ և դար  
նիս բայ միշտամիդ է ոչսնայդն զաման այս  
զագուման և նատասան մարդուն զչազ վայման  
Գեղձախտը կարող է բնածին լինել կամ ստացական։  
Սոածինը մինք նկատում ենք այն երեխանների մէջ,  
որոնք ծագում են գեղձախտաւոր, կամ որևէ յարա-  
տե հիւանդութիւն ունեցող ծնողներից (բարակա-  
ցաւ, հնացած սիֆիլիս, բաղցկեղ—րակէ և այլն)։  
Երկրորդը զարգանում է՝ բնակարանների լոյսի և  
օդի պակասութեան, խոնաւութեան, սուր և յարատե  
հիւանդութիւնների բնածին տրամադրութեան աղ-

գեցութեան տակ և այլն։ Գեղձախտաւորներն առ-  
հասարակ տրամադրութեան դէպի թոքախտը։ Գեղձ-  
ախտը վիր գարգացման գագաթնակէտին է հասնում  
մօտաւորապէս 7 տարեկան հասակում, իսկ սեռա-  
կան հասունութիւննից յետոյ նա անհետանում է,  
թէ արամագրութիւնը դէպի թոքախտը երկար տա-  
րիներ դեռ կարող է մնալ։ Գեղձախտի առաջանա-  
լուն յաճախ նպաստում են սնունդն ու կենցաղա-  
վարութիւնը։ Մինչև անդամ միծերի մօտ երբեմն  
կարող է գեղձախտ լինել եթէ նրանք չատ ժամա-  
նակ գրկուած են լինում թարմ օդից, օրինակ՝ բան-  
տարկեալների գեղձախտը։

Յաճախ գեղձախտի առաջին նշանները երեխա-  
ների մէջ երեսում են ուրիշ հիւանդութիւններից,  
այն է՝ կարմրախտից (քութէշից), բգացաւից, ջրծա-  
ղիկից, կապոյտ հազից յետոյ, Գեղձերի միծանալը  
յաճախ սկսվում է կեանքի հէնց առաջին ամիսնե-  
րում։ Ամենից առաջ առհասարակ հիւանդանում են  
ասործնօտեայ և սլարանոցի գեղձերը, բայց չատ  
անկամ հիւանդանում են նոյնպէս և ներքին աւշա-  
յին գեղձերը։ Ծնոտի և պարանոցի միացած գեղձե-  
րը ոչ միայն շօշափվում են կլոր և պինդ ուռոյց-  
ների նման, այլ յաճախ նկատելի են և աշքով։ Եր-  
բեմն գեղձերը կակըռմ, բորբոքվում են և նրան-  
ցից ջրալի թարախ է դուրս գալիս, որ յաճախ մի-  
քանի ամիս է տևում։ Խակայն լինում են և այնակի-  
սի զէպեր, երբ գեղձի թարախը կաշու տակովը  
ներքի է լինում, երբեմն էլ ընկնում միջնապատի

(средостѣніе), լանջամաշկի (плевра), կամ սրտապարկի (сердечная сорочка) խորշը և վերին աստիճանի վտանգաւոր բորբոքումները առաջացնում Գեղձախտաւորները քնորոշվում են կամ հաստ կուրս ցցուած շրթունքներով, տանձի կամ սպեսնախնձորի նման քթով, չէլ ճազերով. Կրանք չափից դուրս դանդաղ, սառնարին և անընդունակ են լինում դէպի մտաւոր և ֆիզիքական աշխատանքները; Բացի դրանից յաճախ նրանց պարանոցի գեղձերը ուռչում են. այդպիսիները ունենում են քնքուչակ բարակ կաշի, մետաքսանման, մեծ մասամբ թուխ մազեր, շագանակագոյն աշքեր, թոյլ գարզացած մկաններ և ոսկորներ:

Յաճախ գեղձախտաւորների նշագեղձերը մեծացած են լինում, որով դժուարանում է երեխայի նշառութիւնն ու խօսակցութիւնը. Բացի դրանից շատ անգամ աշքերի, ականջի, կաշու, ոսկորների և յօդերի զանազան հիւանդութիւններ են սկսվում, հարբուխ է լինում ևայլն. Գեղձախտը մեծ մասամբ յարատել է և երբեմն տնում է տասնեակ տարիներ. Բացի վերոյիշեալ բարդութիւննիրից, զեկրիներ. Բացի վերոյիշեալ բարդութիւննիրից, այն է՝ յանկարծակի տեղական կամ ընդհանուր բարակացաւ. Իմանալու ժամանակ մեծ նշանակութիւն ունեն նախազգուշացուցիչ միջոցները. Գեղձախտաւորները պէտք է, մաքուր, թարմ օդից շատ օգտուեն. Այդ դէպրում շատ անգամ գեղձախտը բժշկվում է:

Ճնել և մնունդի վրայ: Մինչկ երկու տարեկան երեխաներին հարկաւոր է տալ գլխաւորապէս կաթ. յետոյ աւելի լաւ է խառն կերակուրներ տալ, միայն պէտք է խոյս տալ չափից դուրս օսլայ (կրահմալ) պարունակող կերակուրներից, օր, գետնախնձորից: Մանաւանդ օգտակար են միսն ու թարմ բանջարեղինները. Մի խօսքով՝ գեղձախտի համար մնունդն ու կենցազավարութիւնը աւելի մեծ նշանակութիւն ունի, քան թէ զանազան գեղերը:

Պախիտը կամ անգլիական ախտը շատ տարածուած մանկական հիւանդութիւնն է: Դա ոսկորների կանոնաւոր զարգացման դէմ հիւանդութիւնն է, որ արտայայտում է նրանց ձեափոխութեան, այն է՝ ախտաբանական ճկունութեան մէջ: Պախիտի պատճառներն են՝ անբաւարար մնունդը, բնակլարանների լոյսի և օդի պակասութիւնը, խոնաւութիւնը, սուր և յարատել հիւանդութիւնները, բնածին տրամադրութիւնը ևայլն. Օր. յայտնի է, որ բախիտը ամենից շատ պատահում է այնպիսի երեխաների մէջ, որոնք արուեստական կերպով են մեծացած: Ծծի երեխաներից աւելի յաճախ հիւանդանում են շատ ջանել մայրերի երեխաները: Մարուր օդի և լոյսի պակասութիւնը գուցէ աւելի նշանաւոր է, քան թէ մօր կաթը. ահա թէ ինչու շատ յաճախ բախիտա-

ւոր երեխաներ պատահում են խեղճ դաստիարգի մէջ, չնայած այն հանգամանքին, որ նրանց կերակրում են մայրերը։ Հինգ այդ է պատճառը, որ տարերկիններում, որտեղ երեխաները ամբողջ օրերով մաքուր օդ են ծծում, բախիտ կամ բոլորովին չի պատահում, կամ թէ շատ թեթև է լինում։

Բախիտ առաջանալուն նպաստում է մանաւանդ խոնաւութիւնը։ Զանգան տեսակ սուր և յարատե հիւանդութիւններից, որոնք նպաստում են բախիտի զարդանալուն, ամենազլխաւորը ժառանգական սիֆիլիսն է, ապա արիւնապակասութիւնը։

Այն հանգամանքը, որ միենոյն վատ պայմանների մէջ գտնուող երեխաներից միքանիսն են միայն ենթարկվում բախիտի, ցոյց է տալիս, որ այստեղ նշանակութիւն ունի բնածին, անհատական տրամադրութիւնը։ Բախիտը առհասարակ արդանդային (բնածին) է լինում կամ թէ երեսում է առադային (բնածին) է լինում կամ թէ երեսում է առաջի տարրուան ընթացքում։ Յ—Գ տարեկանից յետոյ զի տարրուան ընթացքում, իսկ եթէ կար բարախիտ այլևս չի պատահում, իսկ եթէ կար բախիտ, առհասարակ նա անցնում է լինքն իրան։ Միայն ծանր դէպքերում հիւանդութիւնը տարածվում է բոլոր ոսկորների վրայ։

Բախիտի ամենաառաջին նշանը՝ ծոծրակի փափկանալն է. բացի զբանից այդ դէպքում չափից գուրս քրտնում է երեխայի գլուխը, իսկ հոգեառունը (родնութեան) բաւական մեծ է լինում և հազիւ ծածկվում է Յ-Րդ կամ 4-րդ տարում, այն ինչ նրա ծածկվում է Յ-Րդ կամ 4-րդ տարում, այն ինչ նրա

բնական ծածկուելու ժամանակը երկրորդ տարուայ սկիզբն է։

Լանջի վրայ ամենից առաջ աշքի են ընկնում կողերի կոճիկային ծայրերի հաստանալը։ Սյդ փոփոխութիւնը բախիտի համրիչ է կոչվում. Կրծուկու յաճախ սրվում է դէպի առաջ. այնպէս որ կուրծքը մի տեսակ առանձին ձև է ստանում, որ հաւի կուրծք են անուանում։ Բախիտի չնորհիւ յաճախ ողնաշարը ծռվում է։ Եւելի շատ նա ծռվում է դէպի յետ, երբեմն դէպի կողքը, կամ առաջ, շատ անգամ էլ խառն։ Ի հարկէ երեսներ կարող է նաև անզղութեան հետևանք լինել։

Ոտքերի և ձեռքերի վրայ ամենից առաջ աշքի է ընկնում երկար ոսկորների ծայրերի հաստանալը. բացի զբանից այդ ոսկորները ծռվում են, մանաւանդ ոտքերինը, որովհետեւ մարմնի ամբողջ ծանրութիւնը գլխաւորապէս ոտքերի վրայ է։ Սյդ ծռուածքը աւելի շատ է լինում այնժամանակ, երբ երեխանները շատ և երկար են ման գալիս. Բախիտաւորների ատամները ոչ միայն ուշ, այլ և անկանոն են զուրս գալիս և շուտով կերցաւային դառնում։

Բախիտը յաճախ զեղձախտի հետ միասին է լինում. Բժշկութեան զլաւոր նպատակն է—դիմել նախազգուշացուցիչ միջոցների, որոնք են՝ կանոնաւոր սնունդը, երեխանների կենցազավարութիւնը, մաքուր օդը ևայլն։ Պէտք է խոյս տալ չամաքուր գուրս հաց, գետնախնձոր, ալիւրից պատփից զուրս հաց, գետնախնձոր, ալիւրից պատ-

րաստած կերակուրներ գործածելուց, ընդհակառակը՝ հարկաւոր է գործածել կաթ, ձու, միս, միքիչ սպիտակ հաց և այլն, բացի դրանից հիւանդներին ամեն օր ազի վաննաներ են ընդունել տալիս (28°) և աշխատում են որքան կարելի է քիչ պահել ոտքերի վրայ։ Դեղերից գործ են ածում ձկան խլ, երկաթ, խոկ վերջին ժամանակներու մեծ յաջողութեամբ՝ լուսածին (ֆօօֆօրք)։

Դիֆտերիան կամ բավացաւը շափաղանց վարակիչ հիւանդութիւն է. նա առաջանում է Լօֆֆերի բացիներով վարակուելուց։ Դիֆտերիան գլխաւորապէս երեխանների հիւանդութիւն է, թէև երբեմն մեծերի մէջ էլ է պատահում։ Հիւանդութիւնը կարող է անցնել ուրիշներին կամ ուղղակի հիւանդներից՝ նրանց խնամելիս, և կամ մանաւանդ համբոյների միջոցով։ Երբեմն հիւանդութիւնը փոխվում է օդի, երբորդ անձնաւորութեան կամ հիւանդի իրերի միջոցով։ Յըտահարութիւնը, կլիման և խոնաւ եղանակը, երբեմն էլ ուրիշ վարակիչ հիւանդութիւնները, օր. քութէշի երկալը, նպաստում են նրա զարգանալուն։

Կան ընտանիքներ, որոնք աւելի տրամադրուած են լինում դիֆտերիայով հիւանդանալու։ Մանաւանդ յաճախ հիւանդանում են նրանք, որոնց նշագեղերը մեծ են։ Սոհասարակ երեխաները մինչև 6 ամսական հասակը չեն հիւանդանում դիֆտերիայով։ Մեծ մասամբ այդ հիւանդութիւնը 1—7 տարեկան հասակում է պատահում. 14 տարուց յետոյ հիւանդների թիւը նորից պակասում է։

Դիֆտերիայով մէկ անգամ հիւանդացողը կարող է ապահով լինել, որ հիւանդութիւնը նորից չի կրկնուիլ։ Հիւանդութիւնից գեռ միքանի օր առաջ երեխան զգում է իրան թոյլ և դանդաղ։ Սկզբում հիւանդը գող և տաքութիւն է ունենում, բայց շուտով նա սկսում է գանգատուել կոկորդի ցաւի վրայ, որ սաստկանում է մանաւանդ խօսելու, կուլ տալու և գլուխը այս ու այն կողմ շրջելու ժամանակ։ Ստորին ծնօտի աւշային գեղձերն ուռչում են և շատ զգայուն են լինում սեղմելու ժամանակ։ Յաճախ հիւանդները նշագեղձերի մեծանալու պատճառով քթից են խօսում և բաց բերանով չնշում։ Հիւանդութեան ծանրութեան համեմատ կոկորդի վրայ կարելի է տեսնել զանազան պատկերներ։ Միքանի գէպքերում կոկորդի լորձաթաղանթը սովորականից աւելի կարմիր և ուռած է լինում. երբեմն դա սահմանափակվում է կոկորդի սրոշ մասերով, օր նշագեղձերով և մի կողմի քիմքի կամարներով։ Յաճախ նշագեղձերը ծածկվում են դեղնագոյն կամ մոխրագոյն վառերով, որոնք շրջապատուած են լի-

նում կարմիր ժապաւէններով։ Ուրիշ դէսքերում հիւանդացած ոստայնը մահացման չնորհիւ փափուկ, մոխրագոյն, երբեմն էլ սևագոյն է դառնում։ Դիֆտերիան տեսում է մլքանի օրից մինչ միքանի շարաթ, աւելի երկար շատ սակաւ։

Երբեմն դիֆտերիայի փոփոխութիւնները անցնում են մօտակայ լորձաթաղանթի վրայ և աւելացնում վտանգը։ Օր. երբ դիֆտերիան անցնում է քթի լորձաթաղանի վրայ, այդ դէսքում քթից սկսում է թարախանման արտահոսումն և հիւանդները մեծ մասամբ մեռնում են արեան ապականութիւնից և ուժասպառութիւնից։ Երբեմն մեծ տարածութեամբ բորբոքվում է պարանոցի ցանցամաշկը։ Յաճախ դիֆտերիայից յետոյ առաջանում է յարատև երիկամնատապ, որից և մեռնում է հիւանդը։

Երբեմն դիֆտերիայի ժամանակ ուռչում են յօդերը, կամ երեխան հիւանդանում է թոքատապով, պլեվրիտով (լանջամաշկատապ), ներսրատամաշկի և սրտատարկի բորբոքումով և այլն։

Ծիւս հիւանդութիւններից, որոնք առհասարակ յաջորդում են դիֆտերիային, ուշադրութեան արժանի է զլիսաւըապէս նեարդերի հիւանդութիւնը։ Յաճախ կաթուածի աղղոքութեամն է ենթարկվում քիմքը, շիւանդն սկսում է քթից խօսել, իոկ կիրած ժամանակ կիրակութեամն է բարձրացնուցից քթշկութիւն։ Հիւանդութիւնը երկալուն պէս, պէտք է առանձնացնել հիւանդին առողջներից և ախտահանութեան ենթարկել հիւանդի սեննեակն ու իրերը։

Առողջներին ազատ պահելու համար ամենալաւ միջոցն է տեղափոխել հիւանդ երեխային, կամ առողջներին ուրիշ տուն և որբան կարելի է շուտ։

Որ երբեմն առողջանալու ժամանակ է պատահում։ Զարմանալի է, որ մինչև անգամ թեթև դիֆտերիայից յետոյ հիւանդները սակաւարիւն են դառնում։ Դիֆտերիայից առաջացած արեան պակասութիւնը յայտնի է իր յամառութեամբ, որովհետև երկար ժամանակ չի բժշկվում։ Բացի գունատութիւնից, հիւանդ երեխանները այդ դէսքում շարունակ գանգատվում են ախտրժակի բացակայութեան, սաստիկ ուժասպառութեան համար եայլն։

Որբան և թեթև լինի դիֆտերիան, այնուամենայնիւ ոչ մի ժամանակ չի կարելի հանգիստ լինել, որ հիւանդութիւնը բարեյաջող հետեանք կ'ունեայ, որովհետև ոչ ոք չի կարող երաշխաւոր լինել, թէ հիւանդութիւնը չի տարածուիլ կոկորդի վրայ և մահացու չի լինիլ։

Սոհասարակ քանի երեխան փոքր է, այնքան աւելի վտանգաւոր է հիւանդութիւնը։ Որովհեակ դիֆտերիան, ինչպէս ասացինք, չափոց դուրս վարակիշ հիւանդութիւն է, այդ պատճառով ամենից առաջ անհրաժեշտ է նախազգուշացուցիչ քթշկութիւն։ Հիւանդութիւնը երկալուն պէս, պէտք է առանձնացնել հիւանդին առողջներից և ախտահանութեան ենթարկել հիւանդի սեննեակն ու իրերը։

Առողջներին ազատ պահելու համար ամենալաւ միջոցն է տեղափոխել հիւանդ երեխային, կամ առողջներին ուրիշ տուն և որբան կարելի է շուտ։ Ինչ վերաբերում է ուրիշ նախազգուշացուցիչ միջանցներին՝ առաջին տեղը պէտք է բռնեն սեննեակի

և հիւանդի բոլոր իրերի մաքրութիւնն ու օղափոխութիւնը։ Հիւանդին յաճախողները, կամ նրա մօտ գտնուզները պէտք է այն տեսակ շոր հազնեն, որ կարելի լինի յետոյ լուանալ։ Հիւանդի մօտ հարկաւոր չէ ուտել, ոչ խմել։ Աւելորդ կահ-կարասիքը, մանաւանդ փափուկ բազկաթոռները, կապերաները, վարագոյները եայն, հարկաւոր է գուրս տանել։ Հիւանդի կերակուրը միմիայն ջրալի պէտք է լինի և գլխաւորապէս կաթ։ Այժմ դիֆտերիայի ամենալաւ բժշկելու միջոցը՝ Բերինդի շիճուկն է։

Շիճուկի բուժիչ յատկութիւնը կայանում է նրանում որ, ինչպէս փորձը ցոյց է տալիս, մեռնողների տոկոսը դրանից պակասում է։ Բայց միւս կողմից անկասկած է և այն, որ մենք սխալուած կը լինենք, եթէ կարծենք, թէ շիճուկով կարելի է ամեն մի դիֆտերիա բժշկել։ Եթէ, օր, հիւանդութիւնը անուշադիր է թողնուած և հիւանդին միքանի ժամ է մնացել միայն ապրելու, ի հարկէ այդ դիպրում շիճուկը չի կարող նրան ազատել։ Դիտադութիւնները ցոյց են տալիս, որ շիճուկը օգնում է միայն այնժամանակ, եթք հիւանդութիւնը նոր է սկսուել։

Սմինից յարմար ժամանակը դրա համար աւազի օրերն են։ Սկսած 3—4-րդ օրից շիճուկի ներգործութիւնը թուլանում է։ Թեթև դէպրերում շիճուկը օգնում է և աւելի ուշ գործածութեան ժամանակ։ Բերինդի շիճուկը ոչ միայն բուժիչ յատկութիւն ունի, այլև լաւ նախազգուշացուցիչ միջոց

է, սրովհետև փորձը ցոյց է տալիս, որ եթէ այդ շիճուկից սրսկեն երեխայի կաշու տակը, երեխան կարող է ազատ մնալ հիւանդանալուց։

Ք Ո Ւ Թ Է Ճ (սկարլاتինա)

Քութէշը այն վարակիչ հիւանդութիւններից է, որ յաճախ երեխաների, երբեմն էլ մեծերի մէջ է պատահում։ Մեծ քաղաքներում առանձնակի դէպրեր միշտ պատահում են, այնպէս որ շաբաթ չի անցնում, որ քութէշով մի երկու երեխայ չիւանդանայ։ Ժամանակ առ ժամանակ հիւանդութիւնը տարածվում է շատ երեխաների մէջ և այդպիսով էպիգիմիա է առաջանում։ Քութէշի էպիգիմիան որոշ առանձնայտութիւններ ունի նա զարգանում է դանդաղ և հետզհետէ, բայց տեսմ է երկար և երբեմն տարիներ են հարկաւոր, որպէսզի հիւանդութիւնը բոլորովին անյայտանայ։ Էպիգիմիայի ժամանակ մեռնողների տոկոսը 4—40-ի է համեստ։

Սոհասարակ հիւանդութիւնն սկսվում է յանկարծ տաքութիւնով։ Երեխան ործկում է, կուլ տալու ժամանակ ցաւ է զգում, իսկ հետեւեալ օրը նրա մարմնի վրայ երեսում են մանր կարմիր ցաներ։ Քութէշի ցաները սկսվում են առհասարակ պարանոցից, կրծքի և թիկունքի վերին մասերից, իսկ միքանի ժամից յետոյ տարածվում են երեսի և ամբողջ մարմնի վրայ, բացի ոտներից և ձեռներից,

որոնք ծածկվում են ցաներով մէկ օրից յետոյ միայն։ Երեսի վրայ ցաներից ազատ են մնում ըիթը, շրթունքներն ու կղակլ, որոնք գունատ են մնում։ Այդ գունատութիւնը մէկ կողմից, թշերի առանձին կարմրութիւնը միւս կողմից՝ շատ բնորոշ են քութէշի համար։ Այդպիսով մենք տեսնում ենք, որ քութէշի ցաները երեսում են շատ շուտ, այն ինչ կարմրուկի և ծաղկի ցաները—միայն միքանի օրից յետոյ։ Քութէշի ցաները երեսում են ոչ միայն կաշու այլև կլանի (օրանջրի) և լեզուի լորձաթաղանթի վրայ։ Քութէշի երկրորդ բնորոշ նշանը սոսորդատապն է (воспаленіе зъва, жаба). Թեթի գէպքերում հիւանդն զգում է մի փոքր ցաւ կուլ տալու ժամանակ, իսկ հետազոտութիւնը ցոյց է տալիս, որ նշագեղձները միքիչ ուռած և կարմիր են։ Աւելի ծանր գէպքերում նշագեղձները ծածկվում են դեղնագոյն և սպիտակ փառերով։

Քութէշի երկրորդ գլխաւոր նշանը—զերմն է։ Զերմը յանկարծ է սկսվում և միքանի ըսպէից յետոյ  $39^{\circ}-39,5^{\circ}$  է հասնում։ Առաջին  $2-3$  օրը տարութիւնը միքիչ էլ բարձրանում է և  $40^{\circ}-40,5^{\circ}$  հասնելով  $2-3$  օր կանգ է առնում, իսկ յետոյ սկսում է հետզետէ իջնել և միքանի օրից յետոյ հասնում է իր բնական դրութեան։ Բացի այդ երեք զլխաւոր նշաններից կան և ուրիշ նշաններ։ Երեսաները յաճախ ործկում են, որ մեծ նշանակութիւն ունի այնժամանակ, երբ երեխան զերմ և սոսորդատապն է ունենում։

Հիւանդութեան առաջին օրերը լեզուն ծածկվում է մոխրագոյն կամ սպիտակ շերտով, բայց  $2-3$ -րդ օրը նա սկսում է մաքրուել ծայրերից և  $1-2$  օրից յետոյ մութ կարմիր, մալինայի գոյն է ստանում։ Այդ տեսակ լեզուն շատ բնորոշ է քութէշի համար, այնպէս որ կասկածելի դէսքերում միմիայն դրանով էլ կարելի է հիւանդութիւնը որոշել։

Հիւանդութեան  $3-4$ -րդ օրը դուրս տուած ցաները առհասարակ հասնում են իրանց գարգացման գաղաթնակէտին, յետոյ կամաց-կամաց գունատվում, իսկ մէկ շաբաթից յետոյ կաշին ստանում է իր նախկին տեսքը։ Միևնույն ժամանակ տարութիւնն օր ըստ օրէ իջնում է և ցաների անհետանալուց յետոյ հասնում է իր բնական դրութեան։ Միքանի օր ես և կտշին սկսում է փոթուել (պլոկուել)։

Քութէշից յետոյ կաշու այդ փոթումը այնքան բնորոշ է, որ կարելի է հիւանդութիւնը սրոշել առանց հարցուփորձ անելու։ Մատների ափերի և նրբանի (գարշապարի) կաշին սկսում է փոթուել մեծ շերտերով, իսկ մարմնին ու երեխնը մանր, թէփանման կտորներով։ այդ շարունակվում է առհասարակ 2-3 շաբաթ, երբեմն էլ 6 շաբաթ։

Քութէշի ժամանակ բարպաւթիւններն ու յաջորդող հիւանդութիւնները չափից դուրս շատ են։ Քութէշին յաջորդող ամինածանր հիւանդութիւններից մէկն է երիկամունքի բորբոքումը, որ մեծ մասմբ սկսվում է  $10-21$  օրից յետոյ։ Մէզի քա-

նակութիւնը սղակասում է, երբեմն էլ մինչև անդամ քոլորովին ընդհատվում. հիւանդի երեսը, ոտքելը, ապա և ամբողջ մարմինը ուռչում են: Բացի գրանից պատահում են ոսկրացաւ, ներսրտամաշկի բորբոքումն եայլն:

Քութէշը ամենանենդաւոր հիւանդութիւններից մէկն է, որովհետեւ զանազան բարդութիւնները և մանաւանդ երիկամունքի բորբոքումը, կարող են միշտ ուղեկցել նրան: Քանի որ քութէշի թոյնի դէմ կոռուելու միջոց դեռ ես յայտնի չէ, մնում է միայն նախազգսւշացուցիչ և նշանական բժշկութիւնն: Հիւանդին խկոյն պէտք է առանձնացնել առողջներից: Մենք գիտենք, որ քութէշը կարող է երբարդ անձնաւորութեան կամ հիւանդի իրերի միջոցով փոխանցուի: Այդ պատճառով պէտք է ուշադրութիւն դարձնել և դրա վրայ, Հիւանդը պէտք է իր առանձին խնամովը, իր անօթներն ու կահ-կարասիքն ունենայ: Բժիշկներից շատերը պահանջում են, որ հիւանդի եղբայրներն ու քսյրերը ուսումնաբան չկնան: Այդ ի հարկէ շատ նպատակայարմար է, բայց այն դէպքում միայն, երբ հիւանդը կանոնաւոր առանձնացրած չէ, հակառակ դէպքում նրանք կարող են յաճախել ուսումնաբան 11 օրից յետոյ: Քութէշը վարակիչ է համարվում 4—6 շաբաթ, այսինքն երբ վերջանում է փոթումը (պլուսելը): Բացի դրանից, նախազգուշացուցիչ միջոցներին է պատկանում և բնակարանի ու հիւանդի իրերի ախտահանութիւնը:

Շատ լաւ կը լինի, եթէ հիւանդութիւնից յետոյ

այրեն հիւանդի ամբողջ անկողինը:

Եթէ երեխայի տաքութիւնը  $40^{\circ}$  բարձր չէ, ոչ մի առանձին միջոց հարկաւոր չէ: Հիւանդին տալիս են կաթ, արգանակ, իսկ խմելու համար ջուր, լիմոնադ: Եթէ տաքութիւնը հիւանդութեան սկզբից բարձր է, հիւանդին բժշկում են սառն ( $26^{\circ}$ — $22^{\circ}$ ) վանինաներով, որոնք աւելի լաւ հետևանքներ են տալիս, քան թէ միւս ձևերով բժշկելը: Սյդ տեսակ վանինաներ հիւանդին օրը 2—3 անգամ են ընդունել տալիս և ամեն անգամ վանինայի մէջ 20—30 րոպէ պահում նրան: Բերանն ու սոսորդը ողողերու համար գործ են ածում բերտօլիտի աղ, կամ բորային թթուուտ՝ մէկ բաժակ ջրին մէկ թէյի գդակ, իսկ գլխին գնում են սառը փաթեթ (կոմպրեստ): Որովհետեւ երիկամունքի բորբոքումն առհասարակ հիւանդութեան մինչև 21-րդ օրն է երկում, այդ պատճառով հիւանդը գոնէ երեք շաբաթ չպէտք է անկողնուց վեր կենայ, իսկ դուրս գալ կարող է միմիայն կաշին պլայուելուց յետոյ: Երիկամունքի բորբոքումի առաջն առնելու համար խորհուրդ են տալիս՝ ջերմն անցնելուց յետոյ, օրը 2 անգամ տաք վանինաներ ընդունել տալ ( $28^{\circ}$  ր.): Սոսորդգատապիժ ժամանակ, երբ հիւանդը կու տալու միջոցին սաստիկ ցաւ է զգում, հարկաւոր է նրա բերանը սառոցի կտորներ դնել ծծելու, բայց չթողնել որ ծամի ու կու տայ: Եթէ երեխան դժուարութեամբ է բերանն առնում սառոյցը, կարելի է տալ նրան քաղցրելինի հետ:

Կ Ա Ր Մ Բ Ո Ւ Խ Կ

Բոլոր վարակիչ հիւանդութիւններից, բացի համատարած դումից (գրառութեան), կարմրուկը ամենայաճախ մանկական հիւանդութիւնն է։ Նա քնորոշվում է կաշու վրայ երևացած կարմիր ցաներով, զերմով և թժի, աշքերի և չնչափողերի բորբոքումով։ Կարմրուկի ցաները խիստ զանազանութում են քութէշի մանրակէտ և ցրուած ցաներից։ Նրանք ոսպի մեծութիւնից մինչև արծաթեայ 5 կոպէկանոցի մեծութեան են լինում, բաց կարմրագոյն, անհաւասր, կարծես կրծուած ծայրերով։ Եթէ շօշափինք այդ ցաները, կը համոզուենք, որ նրանք կաշու մակերեայթից միքիչ բարձր են։ բացի դրանից կարմրուկի ցաները երկու մասից են բաղկացած—խաղաւարտից (ուուլա), որ մէջտեղումն է գտնվում և նրա շուրջը՝ կարմիր ֆօնից։ Կարմրուկի ցաները մարմնի վրայ միաժամանակ չեն երեսում, այլ երեք օրուան ընթացքում, վերևից ներքեւ։

Առհասարակ ամենից առաջ, հիւանդութեան հէնց առաջին օրը, ցաները երեսում են երեսի, երկրորդ օրը—մարմնի, երրորդ օրը—ոտների և ձեռների վրայ, իսկ երեսինը սկսում է գունատուել։ Որքան սաստիկ է լինում գուրս տուածը, այնքան շատ է սկսվում պլոկուել կաշին։ Այդ գոթումը ամենից յաւ նկատելի է լինում երեսի վրայ։ Կարմրուկի ժամանակ կաշին պլոկում է մանր թեփան-

ման կտորներով։ Փոթումը ընդամենը տեսում է 5—7 օր։ Կարմրուկի ժամանակ թժի, աշքերի և չնչափողերի բորբոքումը ցաներից առաջ է երեսում։ Ամենից առաջ սկսվում է հարբուժս և փոքրիկ հազ, իսկ յետոյ 24—48 ժամ անցած սկսվում է և աշքերի բորբոքումն։ Հիւանդութեան ժամանակ միծ մասսամբ տարութիւնը  $39^{\circ}$ — $40^{\circ}$  է լինում և վերցանում է առհասարակ 5—7-րդ օրը, երբեմն էլ միայն 9-րդ օրը։ Լեզուն հիւանդութեան բոլոր ժամանակ ծածկվում է սպիտակ փառով։ Պատահում են դէպքեր, երբ կարմրուկի ժամանակ երեխաները ործկում են, որ կասկածելի դէպքերում վճռողական նշանակութիւն է ունենում։ Ուելի յաճախ, քան ործկումը, հիւանդութեան սկզբից լուծողութիւն է պատահում մանաւանդ մինչև 5 տարեկան երեխաների մէջ։

Երբեմն կարմրուկը բարդվում է զանազան հիւանդութիւններով, ցաները երևալու ժամանակ քթից սկսվում է արիւնահոսութիւն, որ պահանջում է շուտափոյթ օգնութիւն։ Բացի դրանից յաճախ պատահում է նաև թորերի բորբոքումն։

Պէտք է ասել, որ կարմրուկի ամենասովորական և ամենավտանգաւոր բարդութիւններից մէկն է թորերի բորբոքումը, որովհետև գրանից կարող է թորախտ առաջանալ։ Բնական կարմրուկը՝ առանց բարդութիւնների վտանգաւոր հիւանդութիւն չէ, թորերի և աղիքների կողմից բարդութիւնները

պատահում են աւելի յաճախ երեխայի փոքր հասակում։ Սյդ պատճառով մինչև 2 տարեկան երեխաների համար կարմրուկը չափից գուրս վտանգաւոր հիւանդութիւն է։

Կարմրուկով վարակվում են օպի, անմիջապէս հիւանդի, երրորդ անձնաւորութեան կամ հիւանդի իրերի միջացով։ Ամենից յաճախ երեխաները վարակվում են ուսումնարաններում։ Ահա թէ ինչու նախ և առաջ հարկաւոր են նախազգուշացուցիչ միջոցներ։

Հէնց որ երեխան կարմրուկով հիւանդանայ, նրան խոկոյն հարկաւոր է բաժանել առողջներից։ Մոլորութիւնն է կարծել, թէ երեխաները պէտք է անպատճառ հիւանդանան կարմրուկով։ Նաև կը լինի, եթէ երեխան բոլորովին կարմրուկով չհիւանդանայ, որովհետեւ, ինչնու կարելի է երաշխաւորել, թէ հիւանդութիւնը չի բարդանայ ուրիշ, աւելի վտանգաւոր հիւանդութիւններով։ Հիւանդի եղբայրներն ու քոյրերը 2 շաբաթ չպէտք է ուսումնարան գնան, իսկ ինքը հիւանդը 3 շաբաթ։ Կարմրուկի բժշկութիւնն իսկապէս կարող է միայն նշանական լինել։ Որպէսզի հիւանդը չմրտի և հիւանդական լինել։ Որպէսզի հիւանդը չմրտի և հիւանդութիւնը շբարդանայ, նա պէտք է տանը նստած մնայ մինչև հազի վերջանալը։ Ահնեակի տաքութիւնը 14°-ից պակաս և 16° աւելի չպէտք է լինի։

Աչքերը վնասուելուց ազատ պահելու համար, սենեակը պէտք է միթիշ մութ լինի։ Հիւանդին հարկաւոր է տալ զլսաւորապէս՝

կաթ, սպիտակ հաց, ձու և նայելով ախորժակին, մինչև անգամ միա խցկանու և նուռար վաճառ առ այս օքանի մասնից ապահով բնաշխ մրցակից մասնաւու և ուսման մութ առ ամսութ ու ծաղկի են ծաղկի ՊԵՏՈՒՍՈՒՄՆԵՐՆ

Մինչև ՏԻ կարի սկիզբը ծաղիկը ամենայն իրաւամբ զարհութելի հիւանդութիւն էր համարվում, որովհետեւ նա գերեզման էր տանում հարկաւ հազարաւոր գոհեր, կամ այլանդակում շատերին։ Այնժամանականից միայն, երբ բժշկականութիւնը գտաւ կոփի ծաղիկի նախազգուշացուցիչ պատուաստը, այդ հիւանդութիւնը՝ ծաղիկը պատուաստուածների համար, կարցրեց իր առաջուայ ահեղ բնաւրութիւնը, որովհետեւ այդպէսները համարեա ոչ մի ժամանակ չեն հիւանդանում ծաղկուս։ Պատուաստի պաշտպանողական ոյժը տեսում է միմիայն 5–10 տարի։ Շատ մարդիկ բնածին տրամադրութիւն են ունենում ինչպէս գէպի կարմրաւկը, այնպէս և դէպի ծաղիկը։ Սյդ է պատճառը որ սաստկանում է հիւանդութիւնն իսկապէս յայտնի չէ։ ծաղիկը, ինչպէս և վարակիչ հիւանդութիւնների միծամասնութիւնը, փոխատրում է օգի, անմիջապէս հիւանդի, նրա իրերի, երրորդ անձնաւորութեան միջոցով։

Հիւանդը վարակուելուց յետոյ, դեռևս միջին թուով 10 օր առողջ է զգում իրան։ Հիւանդութեան

նախադուշակը ջերմն է (39°—40° և աւելի): Եսակ յաճախ պատահում է ստամօքսի խանգարումն, մասնաւանդ գլխացաւ, ործկումն, մշջի ցաւ, որ դեռ ևս յայտնի չէ, թէ ինչից է առաջանում: Միմիայն այդ նշաններով որոշել հիւանդութիւնը մինչև ծաղկի ցաների երևալը՝ շատ դժուար, մինչև անգամ անհնարին է: Բայց կայ մի նշան, որ հեշտացնում է ախտորոշումը: այդ կետանման ցաներն են, որոնք նույնում են սովորաբար փորի ստորին և աղղիների ներքին մասի վրայ: Ծաղկի ցաները ամենից առաջ երեսում են՝ բերանի, սոսորդի լորձաթաղանթի և երեսի՝ վրայ՝ բաց-վարդագոյն խաղաւարտների (ուռեցը) նման: Ցաները երևալուն պէս ջերմը չուտով անհետանում է և մէկ օրից յետոյ առհասարակ իր ընական դրութեան համնում:

Երկրորդ օրը ցաները երեսում են մարմնի վրայ, իսկ երեսինը աւելի շատանում է: Ծաղկի սաստկութեան մասին գաղափար կազմելու համար, մեծ նշանակութիւն ունի երեսի վրայ դուրս տուած ցաների քանակութիւնը: որքան շատ են ցաները, այնքան սաստիկ է և ծաղիկը: Երրորդ օրը ցաները տարածվում են ոտների, ապա և թիվուների վրայ: Երեք օրուան ընթացքում ծաղկային խաղաւարտները դառնում են բշտիկներ, որոնք հետզհետէ մեծանում և լցում են պղուկով, ապա և թարախոտ (8—9-րդ օրը) հեղուկով: Դրանից յետոյ (10—11-րդ օրը) թարախոտ բշտիկները սկսում են կամաց-կամաց չորսական և թափուել: Ամենից առաջ լցում

երեսի, յետոյ մարմնի միւս մասերի բռսերը, իսկ այդ քններին տեղ կլոր սպիներ են մնում: Միմիայն ծանր գէորեթում ծաղիկը բարդանում է կանադական գաղանակների և կաշու, յետոյ թոքերի և շիճուկային թաղանթների կողմից, այնպէս որ մենք պատահում ենք աշերի, ականչի, կոկորդի, լանջամաշկի, սրտպալատեանի, լոզերի և այլ մասի հիւանգութիւնները: Ծաղիկը բոլոր սուր վարակիչ հիւանգութիւններից միակն է, որի դէմ մենք իսկական նախազգուշացուցիչ միջոց ունինք— այդ ծաղիկի պատուաստումն է: Եթէ տան մէջ ծաղիկ յայտնուեց, իսկայն պէտք է հիւանդին առանձնացնել, իսկ շրջապատողները պէտք է ենթարկուեն ծաղիկի նախազգուշացուցիչ միջոց, այն է ծաղիկի պատուաստումն: Որպէս զարգացած հիւանդութեան դէմ ոչ մի ուղիղ միջոց չկայ: Եյդ պատճառով մենք պէտք է բազգաւոր համարենք մեղ, որ բժշկականութիւնը գտել է այդ հիւանդութեան դէմ նախազգուշացուցիչ միջոց, այն է ծաղիկի պատուաստումն:

Խնչպէս վերև ասացինք, մինչև XVIII դարի վերջը ծաղիկը սարսափելի հիւանդութիւն էր համարվում և մարդիկ կոսր կռվում: Ին դրա դէմ զանազան միջոցներով, Վերջապէս XVIII դարի վերջում անդիւցի բժիշկ էղուարդ Զէններին յավերջում անդիւցի բժիշկ էղուարդ Զէններին յազողուեց գտնել պատուաստի եղանակը: Նա ցոյց տուաւ, թէ կովի ծաղիկը, որ նրա ծծերի վրայ է տուաւ,

լինում, կարող է իբրև նախաղկուշացուցիչ միջոց ծառայել իսկական ծաղկի դէմ, նա նկատեց, որ այն մարդիկ, որոնք միշտ կթում են ծաղկով հիւանդ կովերին, երբէք չեն վարակվում իսկական ծաղկով: Դրանից յետոյ, երբ Զէնները սկսեց կովի ծաղկով մարդոց ծաղիկը կտրել, տեսաւ որ վերցինները հիւանդանում են ծաղկի միայն ամենամեղմ տեսակով: Այժմս արդէն ամբողջ մէկ դար է անցել և մարդկութիւնը միայն չնորհակալութեամբ տեսնում է պատուաստման վայլուն հետևանքները: Այդ պատուաստի չնորհիւ շատ շատերը ազատ են մեռման կամ ծաղկով հիւանդանալուց, իսկ հիւանդները մեռնելուց:

Սակայն պէտք է նկատել, որ ծաղկի պատուաստմը միքանի տարուց յետոյ կորցնում է իր ոյժը. այդ պատճառով պէտք է ժամանակ առ ժամանակ կրկնել: Եյդ բոլորից յետոյ շատ հասկանալի է, թէ ինչու ամբողջ Եւրոպայում, գժբաղդաբար բացի Ռուսաստանից, ծաղկի պատուաստումն անհրաժեշտ է դարձել: Ծաղկի պատուաստման ամենայարմար ժամանակը 4—6-րդ ամինն է: Միմիայն ծաղկի համաճարակի ժամանակ հարկաւոր է աւելի վաղ պատուաստել: Պատուաստելու ժամանակ առհասարակ ծակում են վեց տեղից՝ երեք-երեք ամեն մի թեսի վրայ: Պատուաստելուց յետոյ ծակած տեղերը չորրորդ օրը կարմբում և փոքրիկ խաղաւարտների նման բարձրանում են: Այդ խաղաւարտներից, ինչպէս ասացինք, հետզհետէ թարա-

խանման բշտիկներ են գոյանում, որոնք միքանի օրից յետոյ չորանում և թափկում են: Բոլոր այդժամանակ երեխայի առողջութիւնը բնաւ չի փոխվում: Միմիայն պատուաստման 10-րդ օրը նրանք, կարծես, մի փոքր ցաւ են զգում ծակած տեղերում: Բացի դրանից նրանք ջերմ են ունենում, որ սակայն 2—3 օրից յետոյ անցնուամ է: Այդպիսասիվ, տեսնելով ծաղկի պատուաստման ահագին նշանակութիւնը, մենք ոչ միայն կը ցանկայինք, որ դասորան կարելի է շատ տարածուէր, այլ մինչև անգամ անհրաժեշտ լինէր բոլորի համար:

Խ Օ Լ Ե Ր Ի Ն Ա (ործկումն և լուծողութիւն)

Ծծի երեխաները չափից դուրս տրամադրուած են լինում դէպի ստամոքսի և աղիքների խանգարումն, և ամեն տարի այդ հիւանդութիւնը գեղեղման է տանում բազմաթիւ զօներ: Խօլերինայի գըլխաւոր պատճառներն են ամառուայ շոքը, ծծակով կերակրելը և վատ օդը. բացի դրանից մեծ նշանակութիւն ունի երեխաների հասակը (մինչև 1 տարեկաննը) և նրանց ստամոքսի ու աղիքների առանձինութիւնը: Փորձը ցոյց է տալիս, որ խօձին զգայնութիւնը, Փորձը ցոյց է տալիս, որ խօձին աւելի շատ հիւանդանում են նրանք, ու երինայով աւելի շատ հիւանդանում են կերակրում. ընդունց արուեստական կերպով են կերակրում. ընդհանրակը՝ այն երեխաները, որոնց կերակրում են հակառակը,

մայրերը կամ ծծմայրները, համարեայ երթէք չեն  
հիւանդանում: Խոլերինան վարակիչ հիւանդութիւն է, այդ եւ-  
րկում է նրանից, որ այդժամանակ ջերմ, ուժը-  
կեցութիւն և համարեա միշտ ովլունտմիզութիւն  
(ալեցունից) է տեղի ունենում: Ճիշտ է դեռևս  
չեն գտնուած այն միկրօբները, որոնք առաջացնում  
են խօլերինա, բայց պէտք է ընդունել, որ ամառ-  
ուայ շոքերի շնորհիլ կաթը միշտ է և նրա  
մէջ գոյանում է հիւանդութեան թոյնը: Ծծի երես  
խաների ստամոքսի և աղիքների բորբոքման առա-  
ջի նշաններն են՝ ործկումն, լուծովութիւնը և ու-  
ժընկեցութիւնը: Հիւանդն օրը 10—12 անգամ  
լուծում է, բացի դրանից նա ործկում է կտրուած  
կաթ. յետոյ, երբ ործկումը միքանի ժամանակ շա-  
րունակում է, կաթը դուրս է դալիս շկտրուած:  
Դրանից յետոյ երեխան շուտով սկսում է լուծել,  
որ կարող է լինել և առանց ործկալու: Ործկալու  
և լուծովութեան շնորհիլ երեխան շուտով ենթարկ-  
վում է ուժընկեցութեան, որով խօլերինան զանա-  
փում է ստամոքսի և աղիքների հասարակ բոր-  
զանփում է ստամոքսի և աղիքների հասարակ բոր-  
զանփում: Քակորը առհասարակ ջրալի, յորդա-  
բորումից: Տաքութիւն ամեն անգամ  
յաճախ լաց են լինում, նրանց երեսը տանչուողի-  
արտայայտութիւն է ստամում, միզահոսութիւնը պա-  
կասում, մինչև անդամական ընդունում ընդ-

հատվում է: Որովհետև հիւանդն օրգանիզմը բակորի  
հետ չափից դուրս շատ ջուր է կորցնում, երեխան  
սաստիկ ծարաւութիւն է զգում, բերանը չորա-  
նում է: Կամաց 6մ նոցուր թիւ առաջանաւ հիւան-  
դութիւնին, բայց վաղօրօք գուշակել նրա հետևանքը,  
շատ դժուարակ է: Երբեմն հիւանդութիւնը շատ սուր  
է մկավում, այնպէս որ հէնց առաջի օրը երեխան  
ենթարկվում է ուժընկեցութեան: Այդպիսի գէպե-  
րը համարեա միշտ մահաբեր են: Վայրէ առաջանաւ հիւանդութիւնին կամ մահաբեր են: Երբ հիւանդները ուժընկեցու-  
թեան են ենթարկվում 3—5.րդ օրը, նրանք կա-  
րող ենաւ առողջանալ: Խօլերինայի առաջն առնե-  
լու համար, հարկաւոր է որբան կարելի է լաւ հ-  
փել կաթը, պահել նրան հով տեղում, մաքուր հ-  
ծածկած ամանների մէջ, շտալ երեխային կաթի  
մահացներիները և շափից գուրս մաքուր պահել  
ծծակներն ու մտուեները: Ով չի հետեւում այդ կա-  
րոններին, նա վտանգի է ենթարկվում երեխային:  
Բացի վրանից հարկաւոր է ամեն օր երեխային լո-  
ղացնել ( $24^{\circ}$ — $26^{\circ}$  թ.): Զրի մէջ և որբան կարելի է  
մաքրել և հով պահել մանկանոցի օդը: Երեխանե-  
րը շատ անգամ լուծում են, երբ մայրը սկսում է  
երեխային բացի կաթից ուրիշ բաներ են ուտա-  
ցնել: Այդ գէպը ում հիւանդութեան առաջը կարելի  
կը լինի առնել, եթէ նորից վերադառնան առաջ-  
ուայ սնունդին: Երեխայի ստամոքսն ու աղիքները  
այնքան զգայուն են, որ երբեմն մօր կամ ծծմօր

վիշտը և կամ առհասարակ որևէ հոգեկան դնցումը լուծողութիւն են առաջացնում։ Հենց որ երեխան սկսեց լուծել և ործկալ, պէտք է խսկոյն աշխատել առաջն առնել։ Այդ դէպքում մեծ նշանակութիւն ունի պահքի (դիէտայի) կարգաւորելը։ Եատ անգամ լուծողութիւնն ընդհատվում է միմիայն նրանով, որ երեխային սովորականից սակաւ են ծիծտալիս։ Եթէ երեխային կերակրում են արուեստական միջոցներով, այդ դէպքում մեծ նշանակութիւն ունի կաթի կամ նրա փոխանիւթերի (սյրօրատ) սովորականից աւելի նօսրացնելը։

Սաստիկ լուծողութեան և ործկալու ժամանակ ամենից լաւն է՝ ոչինչ չուտացնել երեխային գոնէ 1—3 օրուան ընթացքում։ Խոկ աւելի թոյլ դէպքերում—6 ժամուան ընթացքում։ Այդժամանակ երեխային տալիս են կաթի տեղ շաքարախառն զուր կամ թէյ. սպիտակուցի հետ խառնած, որին աւելացնում են միքիչ կարմիր գինի, աւելի լաւ է եփած, կամ կօնեակ (մէկ բաժակ ջրին մի թէյի գդալ կօնեակ և 2—4 գդալ գինի)։ Եատ օգտաւէտ է երեխային վաննա նստեցնել 5—10 րոպէ, որի տաքութիւնը մարմնի տաքութիւնից միքիչ բարձր է լինելու և տրորել փորը։ Յետոյ հարկաւոր է փորին տաք փաթեթ (компрессъ) դնել։ Եթէ 2—3 օրից յետոյ լուծողութիւնը չանցնի, նոյնը պէտք է կրկնել երկրորդ անգամ։ Այն դէպքերում, երբ բժիշկ հրաւիրելու հարաբերութիւն

չկայ, միակ միջոցն այդ է, որ կարելի է առանց դժուարութեան գործադրել՝ երեխային ազատելու համար։ Ըսդհակաւակը՝ երբ հնարաւորութիւն կայ բժշկի դիմելու, ի հարկէ աւելի լաւ է անմիջապէս բժիշկ հրաւիրել։

Պ Տ Ա Յ Ց



բարու է վյազար ու չ ըստ մըցցին քայլե աւաճ  
այժմուարա միշտիմզ յազրանդոր մասնաւզաւնք  
իսթ մատիկուուրապամ? ողջ յիշառայն բա՛ պահա՞  
սիսացցինս է առ վյազ ձիյա՞ և այժմուր վիշել  
յարդրայդ իշինդ

Յ Ա Ն Կ

ԵԶ

- ԳԼՈՒԽ I.—Ժ առ անգակ անութիւն. —Ի՞նչ է  
ժառանգականութիւնը. —Ֆիզիքական ժառանգա-  
կանութիւն. —Բարոյական և մտաւոր ընդունա-  
կութիւնների ժառանգականութիւն. —Հիւանդու-  
թիւնների ժառանգականութիւն. —Ժառանգական  
հիւանդութիւնների դէմ կոռուելու միջոցներ. . . . . 5
- ԳԼՈՒԽ II.—Ս եռական հասունութիւն (չա-  
փահասութիւն). —Ի՞նչ է սեռական հասունու-  
թիւնը. —Վաղ և ուշ ամուսնութիւն. —Սեռական  
գործարաններ և օվուլեացիա. —Գաշտան, սաղմ-  
նառութիւն. . . . . 20
- ԳԼՈՒԽ III.—Ց դութիւն. —Ի՞նչ է յլութիւնը. —  
Ցուլութեան առողջապահութիւն. —Վիժումն. . . . . 30
- ԳԼՈՒԽ IV.—Ծննդաբերութիւնը. —Ծննդկանի սենեակը. —Եր-  
կունք. —Հոգատարութիւն ծննդկանի և նորածնի  
վրայ. . . . . : . . . . . 45
- ԳԼՈՒԽ V.—Ծննդաբերութեան յաջորդ  
շրջան. —Ծննդկանի առողջապահութիւնը. —Նո-

Բ

- րածին ելեխայի առողջապահութիւնը. . . . . 53
- ԳԼՈՒԽ VI.—Ե բեկիսային կ երակը ելը. —Մօր  
կաթը. —Ծիծ տալու եղանակը. . . . . 66
- ԳԼՈՒԽ VII.—Ծ ծմայը. —Ե՞նչպիսի ծծմայը  
հարկաւոր ընտրել. —Ծծմօր կենցաղավարութիւ-  
նը. —Նրա կաթի վատ կամ լաւ յատկութեան  
որոշումը . . . . . 71
- ԳԼՈՒԽ VIII.—Ա ըուեստական սնուցումն.  
—Մօր կաթի փոխանիւթերը (սորոգաԵ). —  
Կովի կաթը և նրա գործածութեան կանոննե-  
րը. —Նէսալէյի ալիւր, Լեբիխի արգանակ և այլն.  
—Ծծակներ գործածելու վնասակարութիւնը . . . . . 75
- ԳԼՈՒԽ IX.—Ա տամների դուրս գալն ու  
ծծից կտրելը. —Նշաններ. կաթնատամների  
գործ գալը. —Ծծից կտրելը. —Ծծից կտրելու  
ժամանակը . . . . . 81
- ԳԼՈՒԽ X.—Պ ահեցողութիւն և հոգատա-  
րութիւն երեխայի վրայ ատամնե-  
րի դուրս գալուց յետոյ. —Երեխայի օր-  
գանիկմի աստիճանական զարգացումը. —Երե-  
խայի առողջապահութիւնը. . . . . 88
- ԳԼՈՒԽ XI.—Հ ոգատարութիւն հիւանդե-  
րեխայի վրայ. —Երեխանների մահացութիւնը.  
—Հիւանդութեան նշաններ . . . . . 95
- ԳԼՈՒԽ XII.—Ե բեխայի մտաւոր գալ գա-  
ցումն ու դաստիարակութիւնը. —Երե-  
խայի մտաւոր զարգացումը. —Մօր նշանաւոր  
գերը երեխային դաստիարակելու համար. —Երե-  
խային սովորեցնելու ժամանակը . . . . . 100

ՔԷՌԻԽ. XIII.—Մանկական գլուխաւոր հիմնա  
ւանդութիւններ. — Գեղձախայ, Բախիտ,  
Դիֆտերիա, Քութէշ, Կարմրուկ, Ծաղիկ և ծաղ-  
կի պատուաստումն, Խօլերինա. Լան. 6 թ.—. 110

17 . պատուաստումն Հայութիւնները  
— (Առաջօցք) զգմնիմախայ վեխը ցու-  
մանայ մամնանանցը առց և յեխը միան  
մայ և խամորըս փոփոխ ուժիա վեխումն—. ցու

67 . զմանինանուաստի այստանցը զմանին  
առաջար սուսար կամ մատն Առ. XII միջիք  
մամնուստին ուժմանը—. ցու կար բաժնէ  
այստով պատուաստուր ցունք—. ցուրուայուր

18 . պատուաստումն առաջար առաջամբար մաս-  
տուաւում և առաջար առաջամբար մաս-  
տուաւում և առաջար առաջամբար մաս-  
տուաւում և առաջար առաջամբար

88 . պատուաստումն պատուաստում պատուաստում և պատուաստուր մաս-  
տուաւում և պատուաստուր մաս-


թլիսաւոր աղքաւրները, որոնցից օգտուել եմ  
գիրքը կազմելիս.

1. Պրօֆ. Ամմօն („Обязанности матери“).
2. Ժուկ („Мать и дитя“).
3. Պրօֆ. Ահլֆելդ („Руководство къ акушерству“).
4. Պրօֆ. Ջրելէր („Руководство къ акушерству“).
5. Պրօֆ. Զերնով („Анатомія“).
6. Պրօֆ. Մարշալ („Развитие человѣческаго зародыша“).
7. Պրօֆ. Պոդիլիոնցի („Общая патологія“).
8. Պրօֆ. Ելինորս. } („Частная патология и те-  
9. Պրօֆ. Ճըմալել } („Частная патология и те-  
11. Պրօֆ. Բւրգենս } рапія“).
11. Պրօֆ. Ցոլոչինով („Руков. женск. болѣзней“).
12. Պրօֆ. Բիրո („Наслѣдственность“).
13. Պ. Բերժէ („Наслѣд. болѣз. и ихъ отношеніе къ  
брачку“).
14. Պրօֆ. Ֆիլատով („Семиотика и диагностика дѣт-  
скихъ болѣзней“).
15. Կս („Крат. учеб. дѣтск. бол“.).
16. Կս („Острая инфекц. заболѣв. дѣтей“).
17. Սմալլ („Характеръ“).
18. Մարտին („О воспитаніи характера“).
19. Ուշինսկի („Человѣкъ, какъ предметъ воспитанія“).
20. Պրէյէր („Душа ребенка“).

ՆԱ Ամսաք թերակ ազգային դրամի  
այլմերայ պայմա

(<sup>1</sup>որում ուշոնացօն) մօնէ. քոյթ . 1  
(. ՐԹԱ և ՃԱԼԱ) լիսի . 2  
(. Կատօպանակ և օտօծօօջՊ) ըլմիշՅ քոյթ . 3  
(. Կատօպանակ և օտօծօօխՊ) դժրմիհ քոյթ . 4  
(. ՐՈՄՈՂԱ) խամզմ . քոյթ . 5  
(. Ենակացօք օտօչքաբառք օւնաչՊ) խաչյան քոյթ . 6  
(. ՎԱԶՈՂԱ և Ամօն) վիսոսվիրս . քոյթ . 7  
- Ե և ԱՌՈՂՈՏԵ ՎԵՆՏԱԲ) { ասղումիհ . քոյթ . 8  
(. ՎԱՎԵՔ { վրինիփի : քոյթ . 9  
(. ԽՈՎԵԳՈՎ և ԽՈՎԵԳՈՎԻ) խամզունչ . քոյթ . 10  
(. ՀԵՆԻՎՈՎ և ԽՈՎԵԳՈՎԻ) օդիլ . քոյթ . 11  
ա Ենակացօք օտօչքաբառք (ՀԵՆԻՎՈՎ) անդման . քոյթ . 12

(<sup>2</sup>որում  
- Ե և ԱՌՈՂՈՏԵ ՎԵՆՏԱԲ) խամզունչ (ՀԵՆԻՎՈՎ) անդման . քոյթ . 13  
շ ՀԵՆԻՎՈՎ (ՀԵՆԻՎՈՎ) ան . 14  
(. ԵՌՈԴ ԱՌԵՋԱ ԱՌԵՋԱ) ան . 15  
(. ԵՌՈԴ ԱՌԵՋԱ ԱՌԵՋԱ) այլան . 16  
(. ԵՌՈԴ ԱՌԵՋԱ ԱՌԵՋԱ) մայրան ան . 17  
(. ԵՌՈԴ ԱՌԵՋԱ ԱՌԵՋԱ) մայրան ան . 18  
(. ԵՌՈԴ ԱՌԵՋԱ ԱՌԵՋԱ) մայրան ան . 19  
(. ԵՌՈԴ ԱՌԵՋԱ ԱՌԵՋԱ) մայրան ան . 20



Յանկացողները թնդ գիմեն՝ Թիֆլիս, Գուտ-  
տենրէրդ զրախանութին. Դվորцовая, ճ. Լա-  
лаева. և կամ Արմանսկի Բազարъ, Գостиный  
дворъ Манташева, № 30, М. Մագակյանց.

---

ԳԻՒՆ Է 40 Կ.



2224

613.2  
U-20